

Հարգելի՝ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող Արցախի Էլեկտրոնային Գրադարանի կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlis.am/>

E-mail: info@artsakhlis.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlis.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhlislibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



ՎԵՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵՐԿՐԻ ԱՊԱՎԵՆԸ

Ամոռաց հանդիպումներ

«Դիզակ պլյուս» իրատարակչություն
Ստեփանակերտ-2017

ՀՏԴ 821.19-94:355

ԳՄԴ 84(5Հ)-4+68.4

գ. 888

Վերա Գրիգորյան

գ. 888 **Երկրի ապավենը.** Ամսուաց հանդիպումներ/

Ստեփանակերտ: «Դիզակ պլյուս» հրատ., 2017, 184 էջ:

Գրքույկում պատմվում է «Սատարել հարազատ բանակին» ռազմահայրենասիրական կոչի շրջանակներում հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներից կազմված Նախաձեռնող խմբի՝ Պաշտպանության բանակի գորամասերի հետ հանդիպումների մասին, որոնք ՊՆ եւ ՊԲ համապատասխան օղակների հետ համաձայնեցված՝ իրականացրել է գրքույկի հեղինակը՝ խմբի ղեկավար, **ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը:**

ՀՏԴ 821.19-94:355

ԳՄԴ 84(5Հ)-4+68.4

ISBN 978-9939-1-0537-6

© «Դիզակ պլյուս» հրատ., 2017

© Վերա Գրիգորյան, 2017

ԽՄՔԱԳՐԻ ԽՈՍՔ

«Երկրի ապավենը» Վերա Գրիգորյանի թվով 20-րդ գիրքն է: Ինքնատիալ է ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանի գրիչը՝ մտերիմ ու տպավորիչ, խոռվահույզ ու փորորկուտ, ու միշտ հավատով, հույսով ու լույսով լեցուն՝ առ այն, որ Արցախյան պատերազմում անհայտ կորած տղաները մի օր երազի թեւերով՝ կարուտի ճամփաներով, տուն կրառնան: «Բանակն իր թիկունքին, իր կողքին պիտի զգա մեր կենդանի շնչառությունը, մեր ոչ միայն հոգեւոր, այլև՝ ֆիզիկական ներկայությունը»՝ սա՛ է հեղինակի կարգախոսը, եւ զրբում գետեղված պատումներն ա՛յդ մասին են: Հայրենյաց պաշտպանների ճիշտ աշխարհայացքի ձեւավորումը, հայրենապաշտական գաղափարների սերմանումը, հոգեւոր սննդի մատուցումը հայ անվեհեր զինվորներին՝ սա՛ է համարում օրվա հրամայականը Նախաձեռնող խումբը, եւ զրքի էջերում հանգամանալից ներկայացված է այդ տքնածան աշխատանքի արդյունքի ձեռքբերումը: «Հայոց բանակի զինվորը լույսի՝ զինվոր է», -համոզված է զրքի հեղինակը, եւ բոլորս կիսում ենք այդ հեղինակավոր կարծիքը: «Ժողովուրդ եւ բանակ՝ մեկ մարմին, մեկ հոգի»՝ այս անխախտ սկզբունքով է առաջնորդվում Վերա Գրիգորյանը՝ զրքի էջերում ներկայացնելով «Սատարում հարազատ բանակին» Նախաձեռնող խմբի այցելությունները ԱՀ ՊԲ զորամասեր:

Մեզ մնում է բարի երթ մաղթել «Երկրի ապավենը» զրքին՝ դարերի միջով սերունդներին տանելու արցախյան արդի պատմության հերոսապատումները:

ՍՈՅՑԱ ՍԱՐԳԱՅԱՆ

Առաջարանի փոխարեն

ԲԱՆԱԿՆ ԻՐ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ ՊԵՏՔ Է ԶԳԱ ԺՈՂՈՎՐԴԻ ՇՆՋԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ճամանակը լուրջ մարտահրավերներ է դնում մեր առջեւ, եւ դրանցից մեկը, եթե ոչ առաջինը, Արցախի Պաշտպանության բանակի շարունակական հզորացումն է՝ հայրենիքը սպառնացող վտանգներից պաշտպանել կարողանալու համար: Մեր երկրի խաղաղ կյանքի միակ երաշխավորին՝ մեր բանակին, նեցուկ կանգնելու ենք կոչված բոլորս, եւ այս մտքի իրականացմանը պիտի ուղղված լինի յուրաքանչյուրիս ջանքը: Բարոյական եւ ամեն կարգի սատար կանգնել հարազատ բանակին ինչով եւ ինչպես հնարավոր է՝ սա է կարգախոսը: Մեր կազմակերպությունը՝ Արցախի Հանրապետության Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությունը, վաղուց է լծված այդ գործին: Երկար տարիներ լինելով պաշտպանության նախարարին առընթեր Բանակ-հասարակական խորհրդի անդամ՝ ես եմ՝ խմբի հետ, եմ՝ գործիս բերումով /հաճախ նաեւ՝ անհատապես» եղել եմ բանակի զորամասերում, զրուցել զինվորների հետ, նրանց հայրենախրական գրքեր, այլ նվերներ հանձնել, տոն օրերը շնորհափորել:

Շուրջ երկու տարի առաջ գեներալ-լեյտենանտ Լեւոն Մնացականյանի՝ Պաշտպանության նախարար ու ՊԲ հրամանատար նշանակվելուց հետո, հատուկ քափ ստացավ հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչների ներգրավմամբ ու գործուն մասնակցությամբ «Սատարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խմբի գործունեությունը, մշակվեց հատուկ ծրագիր, որը համակարգում է ՊԲ հրամանատարի ԱՀՏՍ զծով տեղակալ, գեներալ-մայոր Վարդան Բալայանը, եւ որի համաձայն՝ Նախաձեռնող խումբը, հասարակական կազմակերպությունների, կրթա-մշակութային հաստատությունների, արտադրական եւ այլ

կարգի ընկերությունների ներկայացուցիչների լայն ընդգրկմամբ, հասցրել է լինել Պաշտպանության բանակի բոլոր զորամասերում: Այս կետում ճշմարտության պահանջով մի խոստովանություն պիտի անեմ. դա մեզ հաջողվել է նախարար Մնացականյանի անձնական մեծ աջակցության շնորհիվ. նա սկզբից եւեր է ըստ ամենայնի կարեւորել Խմբի առաքելությունը եւ զորամասեր մեր բոլոր այցերի կայանալուն աջակցելու աջակցում է ամեն ինչով:

Կարծում եմ, տեղին է մեր երախտագիտությունը հայտնել նաեւ Խմբի աշխատանքը համակարգող, Պաշտպանության բանակի հրամանատարի ԱՀՏՍ գծով տեղակալ, գեներալ-մայոր Վարդան Բալայանին, ԱՀՏՍ գծով քաժնի պետ, գնդապետ Նորայր Սկրտչյանին, ՊԲ լրատվության եւ քարոզության քաժնի պետ, գնդապետ Մենոր Հասրաբյանին:

Ես, ընդսմին, որպես ԱՀ ԱԿԱՀՍ նախագահ, Լեռն Մնացականյանից շնորհակալ եմ նաեւ այն ուշադրության համար, որը նա ցուցաբերել է՝ այցելելով Արցախյան պատերազմում անհայտ կորած ազատամարտիկների հուշաքարան...

Վերոնշյալ այցերին է վերաբերում այս գիրքը: Նպատակը՝ համահավաք ներկայացնել մեր տեսածն ու զգացածը... Դրանք այցեր են, որոնք, իմ խորին համոզմամբ, հոգեկան մեծ քավականություն են պարզեւել թե՝ զինծառայողներին ու թե՝ մեզ: Ասեմ, որ քազմից ու անմիջաբար եղել ենք հենց դիրքապահ զինվորների մոտ, եւ դա ես համարում եմ մեր առաքելության ամենակարեւոր՝ քարոյահոգերանական գործոնը: Այս մտքի ճշմարտացիությունը տեսել-կարդացել եմ տղաների աչքերում...

Եվ այսպես՝ «Սատար կանգնենք հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խմբի հանդիպումները՝ ՊԲ ստորաբաժանումներում:

ՎԵՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՄԱՅԻՍՅԱՆ ՏՈՆՎԿԱՆ ԱՅՑՈՎ ԶՈՐԱՎԱՍԵՐՈՒՄ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ
ՀԱՍԱՐՎԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՎ**

Կարծում եմ, արդար կլինի սկզբում գոնե հակիմ պատմել Պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի անդամներով իրականացված գոնե մի քանի հանդիպման, հետո արդեն՝ Նախաձեռնող խմբի, այսպես ասած՝ «ստայերական» շնչառության մասին վկայող այցերի վերաբերյալ:

Մենք հաճախ ենք արդարացիորեն ասում, որ հայ ժողովրդի, հայկական հանրապետությունների /ՀՀ եվ ԱՀ/ անկախության ու խաղաղ կյանքի միակ երաշխավորն իրեն փառքով պսակած Հայոց քանակն է՝ մեր Պաշտպանականով հանդերձ... Իրավամբ հայրտանում ենք մեր զինվորներով՝ հրադադարը խախտող հակառակորդի դավադիր գրոհներն անվեհերությամբ ետ մղող, նրան չեզոքացնող տասնութամյա հայ տղաների հոգեկան ամրությամբ, եւ այդ ամենն, ինչ խոսք, ճիշտ է, բայց քանակն էլ իր թիկունքին, իր կողքին պիտի զգա մեր կենդանի՝ շնչառությունը՝ մեր ոչ միայն հոգեւոր, այլև՝ ֆիզիկակա՞ն ներկայությունը...

Ահա թե ինչու ԱՀ Պաշտպանության քանակին կից ստեղծված Հասարակական խորհրդի անդամներս, ի թիվս նմանատիպ այլ այցերի, 2015թ. մայիսյան Եռատոնի նախօրեին, համաձայն ծրագրվածի, եղանք քանակի զորամասերում հայոց եռակունք-եռիմաստ մայիսյան հաղթանակների կապակցությամբ օր առաջ շնորհավորելու նրան, Արցախի ժողովրդի սերը փոխանցելու, խաղաղ ու արժանապատիվ ծառայություն մաղթելու եւ քաջության ու աննկունության կոչելու խորհրդով:

Մայիսի 7-ին ՊԲ2 -րդ պաշտպանական շրջան մեկնեցինք

մեծ խմբով: Տեղում մեզ դիմավորեց ՊԵ հրամանատար, գնդապետ Գեղամ Գաբրիելյանը: Նրա հետ համառոտ գրույցից հետո՝ նրա խսկ խորհրդով բաժանվելով երեք ենթախմբի՝ հետաքրքիր ու բովանդակալից հանդիպումներ ունեցանք գումարտակների անձնակազմերի հետ:

Մեր ենթախմբում հինգ հոգի էինք: Գումարտակի հրամանատարի ԱՀՏՍ գծով տեղակալ, մայոր Յուրի Սիրզոյանը տղամերին շնորհավորեց Եռատոնի առթիվ եւ բարձր գնահատելով նրանց հայրենանվեր ծառայությունը՝ այն միտքն ընդգծեց, որ այսօրվա հայ զինվորը Մեծ հայրենականում եւ Արցախյան պատերազմում իրենց հերոսարար դրսեւրած մեր պապերի ու հայրերի գործի արժանի շարունակողն է: Այնուհետեւ, նա տղամերին կոչեց աշալջության, զգուշության, որպեսզի ծառայությունն ավարտելուց հետո ողջուառողջ վերադառնան հարազատների գիրկը:

Ես էլ գրեթե նույն շեշտադրումներն արեցի: Նաեւ հիշեցրի Ազատամարտում զոհված եւ անհայտ կորած բազմաթիվ զինվորների / որոնցից մեկն էլ, ասացի, իմ որդին է, որին դեռ սպասում ենք հավատով ու տառապանքով/ մարտական սիրանքների մասին: Դուք խաղաղ օրերի զինվոր եք, ասացի, բայց այդ խաղաղությունը, ցավոք, շատ պայմանական է, քանզի պարտված թշնամին իր նույն՝ ստոր ու դավադիր վարքով դիվերսիաներ է կազմակերպում, ուստի, իրոք, չափազանց աշալուրջ պետք է լինեք: Ես նրանց նվիրեցի իմ գործերից՝ «Եվ դարից երկար է ձգվում տունդարձի ճամփան» վավերագրությունը եւ «Պողը՝ լեզվին» բանաստեղծական ժողովածուն:

Անկեղծ զրույց ծավալվեց ուսանողներ Հեղնար Գրիգորյանի, Աստղիկ Սողոմոնյանի, Գեւորգ Համբարձումյանի /վերջինս սովորում է ՆԶՊ բաժնում/ եւ զինվորական լսարանի միջեւ: Մեզ ունկնդրողներն ընդամենը մի քանի ամսվա նորա-

կոչիկներ էին, եւ նրանց հետ զրուցելուց զգացինք, որ կարուում են տնեցիներին, բայց դա չի խանգարում ծառայությունն ինչպես հարկն է կատարելուն: Նրանցից Հայկ Չախոյանը, Էղվարդ Փաշայանը եւ Ռուբեն Շահինյանն ուղղակի հիացրին մեզ իրենց վոկալ կատարումներով: Հայկը երգեց շուն Թաթեաթին սատկեցրած Սողոմոնն Թեհերյանի մասին, Էղվարդը «Տառապած հայրենիք» երգը կատարեց, Ռուբենն էլ՝ իր հեղինակածը, որում խնդրում է Հիսուսին՝ պետական սահմանն անառիկ պահող հայ զինվորին պահել անվնաս: Նրանց լսելուց շատ հուզվեցինք:

Այդ օրը Երկրորդ ՊԾ-ում մեզ հետ էր նաև Արցախի ազատամարտիկների միության «Հայրենյաց պաշտպան» հասարակական- երիտասարդական կազմակերպության նախագահ Հաջորդ Մնացականյանը՝ իր խմբով: Նրանք, ըստ նախնական պայմանավորվածության, գնդապետ Գաբրիելյանի հետ միասին բարձրացան սահմանապահ դիրքերը...

* * *

Հաջորդ օրը՝ մայիսի 8 -ին, մեր այցն այլ երանգ պարունակեց... Խորհրդի անդամներից բաղկացած այլ կազմով /ԱՀ ՊՆ կազմորահավաքային բաժնի պետ, գնդապետ Գրիգորի Գասպարյան, ՊԲ Կենտրոնական շրջանի 8-րդ բրիգադի նոտոհրածգային բրիգադի շտաբի պետ, փոխգնդապետ Վաչե Մանասյան,- ով, ի դեպ, Արցախյան պատերազմում անհայտ կորած Շիրին Մանասյանի բոռն է,- նոյն բրիգադի օպերատիվ բաժնի ավագ սպա, մայոր Արամ Սարգսյան, ԳԹԿ պատմության մասնագետ Արեւ Գրիգորյան, ԱՀ ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյան/ ներկայացանք Ստեփանակերտի հ. 10 հիմնական դպրոց՝ մասնակցելու Արիության դասի:

Մեզ դիմավորեց, ապա եւ կայանալիք դասի մասին հակիրճ

խոսեց դպրոցի տնօրեն Սերգեյ Շահրամանյանը: Խորհրդանշական էր, որ դասը կազմակերպել էին նախնական զինպատրաստության կարինետում:

Գրիգորի Գասպարյանի խոսքն՝ ուղղված պատաճի ունկնդիրներին, տարողունակ էր ու հետաքրքիր: Նրանում շղափեցին հայ ժողովրդի անցած դարավոր ուղու մեծագույն փորձությունները. ինչպես նաև՝ տարած սակավ, բայց փայլուն հաղթանակները, այդ թվում՝ Շուշիի ազատագրումը եւ ընդհանրապես, Արցախյան ազատամարտում ձեռք բերված հաղթանակը: Նրա խոսքում ամբողջացված էր Հայ զինվորի հերոսական կերպարը: Այդ թվում՝ եւ այսօրվա մեր հերոս տղաների կերպարը, չէ՞ որ ունենք զինվորներ, որոնք մեն-մենակ էլ են փախուստի մատնել թշնամու դիվերսիոն խմբին... Աշակերտները հարցեր էին տալիս Գասպարյանին՝ իր եւ մարտական ընկերների անցած ուղու վերաբերյալ, եւ նա նոյն անկեղծությամբ ու անմիջականությամբ պատասխանում էր նրանց:

Արեւ Գրիգորյանը հետաքրքիր փաստեր բերեց ու մեկնաբանություններ արեց Հայոց ցեղասպանության /եւ հարյուրամյակի/, Հայրենական մեծ պատերազմի եւ Արցախյան ազատամարտի վերաբերյալ ու շեշտեց այն միտքը, որ այժմ բոլորիս պարտքն է ամուր պաշտպանել ու պահպանել արյան զնով ձեռք բերածը, շենացնել, հզորացնել ազատ ու անկախ Արցախն ու մայր Հայաստանը:

Իմ խոսքում ես անդրադարձա փայլուն հաջողությամբ իրականացված /առաջին հերթին նկատի ունեմ մեր կողմից նվազ կորուստները/ Շուշիի ազատագրության եւ՝ ուազմական, եւ՝ բարոյական նշանակությանը, որովհետեւ այն հայի սրտում վերաբնացրեց ու ամրացրեց հավատը սեփական ուժերի հանդեպ: Մայիսի 9-ը, ասացի, մեզ համար թանկ է առաջին հերթին հենց այդ հավատի վերադառնվ:

Համար 10 հիմնական դպրոցում զինդեկ է աշխատում Արցախյան պատերազմի մասնակից Վարուժան Աղաջանյանը, ում մասին «Մարտիկ» թերթը ժամանակին «Ամենալավ զինվորը հայ զինվորն է» վերնագրով հոդված է տպագրել: Ու ես մտածում եմ. մատադ սերնդի այդպիսի դաստիարակի եւ ուսուցանողի թափած ջանքն իզուր անցնել չի կարող, վստահ եմ, որ զինդեկ Աղաջանյանը հանձինս դպրոցի տղա աշակերտների՝ պատրաստում է վաղվա ...իր ննան «ամենալավ հայ զինվորին»:

Այդ հանդիպման ավարտին էլ ես դպրոցին, ավելի շուտ՝ հենց ՆԶՊ կարինետին, նվիրեցի իմ գրքերից երկուսը. «Հույսի առաջաստներ»-ն ու «Սակավ՝ ես-ի եւ շատ՝ մենք-ի մասին»-ը:

ԺՈՂՈՎՈՒՐԴ ԵՎ ՔԱՆԱԿ ՄԵԿ ՄԱՐՄԻՆ, ՄԵԿ ՀՈԳԻ

2015թ. Հոկտեմբերի 23-ի հանդիպումը, վստահ եմ, անջնջելի հետք է թողել բոլորի մոտ: «Սատարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող Խումբը բաղկացած էր ինձնից, ԱԿԱՀՄ վարչության անդամ, անհայտ կորած ազատամարտիկ Սլավիկ Միրզոյանի կին Էվելինա Աղաջանյանից, ՊՆ ռազմահայրենասիրական բաժնի սպա՝ կապիտան Նունե Արարյանից, «Առաջ, Արցախ» երիտասարդական - հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Սասուն Ավետիսյանից, Շ. Ազնավորի անվան մշակութային կենտրոնի տնօրեն Արմեն Հովսեփյանից՝ «Արցախի բալիկներ» երգիպարի համույթի հետ միասին:

Մեզ դիմավորեց զորամասի հրամանատար, գնդապետ Գրիգորի Սահակյանը: Հանդիպումը բավականին տպավորիչ էր: Տեղի ունեցավ ջերմ ու անկեղծ զրոյց՝ զինվորների ու մեր միջեւ, հնչեցին մայրական պատգամներ, հայրենիքին գերազանց ծառայելու կոչեր: «Արցախի բալիկներ»-ի համերգը ջերմորեն դիմավորեց զորամասի՝ պահին ներկա գտնվող զինվորական կոնտինգենտը: Ծափերով ուղեկցվեց նաև Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանի սան Լուսինե Մարտիրոսյանի վոկալ կատարումը: Զինվորների համար նվերներ էինք տարել, բաժանեցինք, պարզեւատրման մասին նախօրոք կայացված որոշման համաձայն՝ ես զորամասի հրամանատարին հանձնեցի «Հայրենիք եւ հավատ» մեղալ: Խումբը ծաղկազամբյուղ դրեց Հայոց ցեղասպանության 100 ամյակի առթիվ զորամասի տարածքում կանգնեցված խաչքարի մոտ:

* * *

Բովանդակալից անցավ եւ հաջորդ օրվա՝ հոկտեմբերի 24-ի ուղեւորությունը ՊԲ Առաջին պաշտպանական շրջան՝ արդեն ՊՆ-ին առընթեր քանակ- հասարակական խորհրդի անդամներով։ Ինչպես միշտ, այն ուղղված էր հայրենյաց պաշտպանների եւ հանրապետության հասարակության միջեւ կապի ամրապնդմանը։ Դիվիզիայի հրամանատար, գնդապետ Սերգեյ Շաքարյանի ու հրամկազմի հետ զրույցից հետո եղանք զինվորների մոտ, խոսեցինք անցած պատերազմում թանկ գնով ձեռք բերված հաղթանակի մասին եւ կոչ արեցինք քշնամու ոտնձգություններին արժանի հակահարված տալով՝ այն ձեռքում պահել ամուր, նաև վստահեցրինք, որ Արցախի ժողովուրդը կանգնած է իր փառապահ քանակի թիկունքին։

* * *

Տպավորություններով հարուստ էր նոյեմբերի 13-ի այցը ՊԲ Հինգերորդ պաշտպանական շրջան։ Ն. զորամասի հրամանատար, գնդապետ Սամվել Գրիգորյանը մեզ՝ ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանիս, «Առաջ, Արցախ» ԵՀԿ նախագահ Արքուր Հայրապետյանին, Շ. Ազնավորի անվան մշակութային կենտրոնի տնօրեն Արմեն Հռվեհյանին, Ստեփանակերտի համար 6 դպրոցի զինուեկ Արմեն Մարտիրոսյանին, ՊԲ ռազմահայրենասիրական բաժնի սպա Նունե Արադյանին, «Գոյամարտ» հեռուստաձրագրի լրագրող Էրիկ Հակոբյանին եւ հեռուստաօպերատոր Մասիս Բեգլարյանին, հնարավորություն ընձեռեց լինելու առաջին գծում՝ դիրքապահների մոտ։

Անհնար է նկարագրել այն հուզմունքը, որ ապրեցինք բոլորս՝ մարտական դիրքում գտնվող Զինվորի հետ հանդիպումից...Փառք ու պատիվ տասնութ-քսան տարեկան մեր այդ

տղաներին, որոնք աչալցորեն պահում են պետական սահմանը՝ մեկընդմեջ ետ մելով մեր հաստագլուխ հակառակորդի դավադիր գործողությունները: Մենք նրանց հանձնեցինք անհատապես հայրայքած նվերները: Մարտական ծառայությունում իրենց առավել լավ դրսեւրած մի քանի զինվորի ես պարզեւատրեցի **LՂՀ ԱԿԱՀՄ** պատվոգրով ու շնորհակալագրերով: Բոլորս խրախուսեցինք նրանց եւ շնորհակալություն հայտնեցինք քաջ ու բարեխսիդ ծառայության համար:

Ի դեպ, հիշյալ այցը համբնկել էր զորամասի մարտական հերթապահության հերթափոխի հետ, ինչն ավելի սրություն հաղորդեց մեր տպավորություններին: Այն մեր փառապանձ զինված ուժերի հանդեպ հպատության եւ հուզմունքի մեծ ալիք առաջացրեց բոլորիս սրտերում: Կարող եմ վստահ ասել, որ այդ հանդիպումը բարոյական մեծ լիցք է հաղորդել երկու կողմին էլ՝ եւ՝ մեզ, եւ՝ զինվորականներին:

* * *

Նոյեմբերի 26-ի վաղ առավոտյան **ՊԲ Հյուսիսային ուղղության Ն.** գորամաս ուղեւրվեցինք, ինչպես միշտ՝ մասնակիորեն «թարմացված» խմբով. այս անգամ համար 6 դպրոցի զինդեկից բացի, մեզ հետ էր նաև նրա տնօրեն Վիլեն Ղահրանցյանը: Խումբը հրաշալիորեն լրացնում էին **LՂՀ** զոհված ազատամարտիկների հարազատների միության նախագահ Արթուր Առատամյանը, **ՀՅԴ ԱԵՄ** անդամներ Մերգեյ Հարությունյանն ու Մերուժան Սուլեյմանյանը, **LՂՀ** ժողովրդական արտիստ Քաջիկ Հարությունյանը, ճյուղիստուիհի Սոսե Բալյասանյանը: Առաջ ընկնելով, հարկ եմ համարում ասել, որ բոլորս այդ հանդիպումից վերադարձել ենք ուղղակի մինչեւ մեր հոգու խորքը հուզված:

...Զորամասի հրամանատարը՝ գնդապետ Հարություն

Ամիրխանյանը, մեզ ծանոթացրեց հրամկազմի, մասնավորապես՝ իր ԱՀՏՍ գծով տեղակալ, մայոր Զոհրաբ Մկրտչյանի, շտարի պետ, փոխգնդապետ Վլեժ Գրիգորյանի հետ, որից հետո բարձրացանք դիրքերը՝ սահմանը պահող տղաների մոտ: Տասնվեց հոգանոց մեր խմբի յուրաքանչյուր անդամ անհատապես հոգացել էր նրանց համար բարիքներ ձեռք բերելու մասին, լավ բեռով էինք ներկայացել՝ առատ հրուշակեղեն ու մրգեղեն եւ այլ սննդամբերք, փափուկ գուլպաներ, հագուստենի մանրամասներ:

Տղաներին ի սրտե բավականություն պատճառեց ձյուդիստուի Սոսե Բալասանյանի պատմածը: Ձյուդոյի գծով աշխարհի առաջնությունում երրորդ տեղը գրաված Սոսեն մասնակցել է եւ 2015թ. Բարվում կայացած Եվրոխաղերին՝ գրավելով առաջին տեղը: Ժապավենով մեղալը նրա պարանոցից կախող՝ ազգությամբ աղքաբեցանցի պաշտոնյան իրեն կորցրեց, կարմրեց եւ ի վերջո դրությունից դուրս գալու համար ճարը կտրած ասաց՝ տեսաք, չէ՞, որ առաջին տեղը գրավեց մեր Ղարաբաղի մարզուիհին, երբ Սոսեն, թքած ունենալով, որ հակառակորդի մայրաքաղաքի հարյուր -հազարավոր բնակչութի առջեւ է կանգնած՝ հպարտությամբ թափահարեց իր հետ հատուկ վերցրած LՂՀ դրոշի փորքածավալ տարբերակը: Եթե Սոսեն հաղթանակից շատ հուզված չլիներ ու նաև ջահել աղջկա կողմից գուեհիկ համարվելու վտանգը չզգար՝ երեք մատից բաղկացած հայտնի կոմքինացիան ցույց կտար այդ պաշտոնյային՝ ասելով՝ Ղարաբաղը եղել է ու կա միայն մե՛րը...

Ի դեպք, զորամասի հրամանատարի հետ անկեղծ ու անկաշկանդ գրույցի ընթացքում պարզվեց, որ նա հայտնի «Արաբ» զոկատի տղաներից է..., «բախտը բերել է» ընդամենն այնքանով, որ այն ճակատագրական մարտին նրանց հետ չի եղել: Հուզվեցի, երբ նա՝ Հարութ Ամիրխանյանը, ասաց. «Պատկե-

բացնո՞մ եք, որ մինչեւ հիմա էլ ինձ անմեղ մեղավոր եմ զգում, մեղավոր՝ կարծես նրա համար, որ ես ապրում եմ, իսկ նրանք չկան... դա ծանր զգացում է»: Ես նրան ասացի՝ հասկանում եմ, Հարութ ջան, բայց թույլ տուր ասելու, որ դա միայն ծանր զգացում չէ, այլև՝ ազնիվ զգացում, ազնիվ մարդու եւ ընկերոջ զգացում: Որ պատերազմում մարդ կորցնելը ծանր է, ով` ով, իսկ ես՝ անհայտ կորած զինվորի մայրս, շատ լավ գիտեմ: Գիտեմ, բայց ինձ լիովին չեմ հանձնում վշտին, թույլ չեմ տալիս, որ այն ինձ զրկի հայրենիքի համար ապրել շարունակելուց, ոչ, ընդհակառակը՝ ճգտում եմ նրան ծառայել թշնամու լծի տակ տառապող բացակա միակ որդուս տեղ էլ... Հարություն Ամիրխանյանը զոհված ու անհայտ կորած իր մարտական ընկերների պատվին ու հիշատակին հսկա խաչքար է պատրաստել տվել եւ շուտով զորանասի տարածքում տեղի կունենա խաչքարի հանդիսավոր բացումը... Ես նրան էլ մեր կազմակերպության «Հայրենիք եւ հավատ» մեղալով պարզեւատրեցի:

Ոչ, մեր նենգ թշնամուն, որքան էլ որ նա ոտնագություններ անի արդեն կայացած մեր պետության, երկրի դեմ, չի հաջողվի ոչինչ: Չի հաջողվի, քանի դեռ կա մեր բանակը, կան մարտերում թրծված նրա հրամանատարները, ումից իսկական ուազմագիտություն են սովորում սահմաններն ամուր պահող այսօրվա, եւ կտորեն, վաղվա մեր զինվորները: Անկորուստ ծառայություն բոլորին եւ խաղաղություն՝ հայոց զույգ երկրին, հայ ժողովրդին:

Պատրաստ ենք այսուհետ եւս աջակցել Պաշտպանության նախարարությանն ու Պաշտպանության բանակին՝ ինչով կարող ենք: Հայոց բանակն ու ժողովուրդը մեկ մարմին են՝ մեկ հոգի: Այդպես կա՝ այդպես կլինի:

ԵՐԴՄԱՆՔ ՀԱՎԱՏԱՐԻՄ

Հասարակական կազմակերպությունների եւ կրթամշակութային հաստատությունների կողմից հարազատ բանակին ամեն կերպ աջակցելու առաքելությունը, որ գնալով ավանդույթի վերածվելու միտում է ձեռք բերում, շարունակվում է:

2015թ. դեկտեմբերի 17-ին մենք հերթական անգամ եղանք Պաշտպանության բանակի 9-րդ պաշտպանական շրջանի Ն. զորամասում:

Խմբի կազմում էինք ես՝ Վերա Գրիգորյանս, ԱԿԱՀՄ վարչության անդամ, անհայտ կորած ազատամարտիկի որդի Կարեն Գրիգորյանը, մայրաքաղաքի համար 6 դպրոցի տնօրեն Վիլեն Ղահրամանյանը եւ զինուկ, Արցախյան ազատամարտի մասնակից, երրորդ կարգի հաշմանդամ Արմեն Մարտիրոսյանը, ով կովել է լեզենդար Պետոյի հրամանատարության տակ, եւ ուժ կյանքը փրկել է հենց նա՝ Պետրոս Ղետնոյանը, համար 12 դպրոցի զինուկ, պատերազմի մասնակից, պահեստագորի սպա, մայոր Նվեր Լազարյանը, Շ. Ազնավորի անվան ՄԿ տնօրեն, պատերազմի մասնակից Արմեն Հովսեփյանը, Հայ ավետարանչական ընկերակցության հոգեւորական, վերապատվելի Արամ Մկրտչյանը, ԼՂՀ ՊՆ ռազմահայրենասիրական դաստիարակության եւ հասարակական կազմակերպությունների հետ կապերի բաժնի սպա, կապիտան Դավիթ Սաֆարյանը, «Գոյամարտ» ծրագրի լրագրող Ալեքսեյ Ֆիլյանը եւ հեռուստաօպերատոր Դավիթ Վարդանյանը:

Կարճ զրոյց՝ զորամասի շտարի պետ, փոխգնդապետ Կարեն Հայրապետյանի, զորամասի հրամանատարի ԱՀՏՄ գծով տեղակալ, փոխգնդապետ Մետակ Հայրապետյանի եւ հրամակմի մյուս ներկայացուցիչների հետ /գնդի հրամանատար Հովիկ Աբրահամյանն այդ միջոցին դասավորությունում էր՝

դիրքապահների մոտ/, ապա մեր խումբը բաժանվեց երկու մասի. երկու զինդեկները, մեր կազմակերպության վարչության անդամն ու մշակույթի կենտրոնի տնօրենն մեր տարած ամանորյա առատ նվերների կեսը տարան դիրքերը, մյուս ենթախմբի անդամներս էլ գորամասում ներկա զինվորականների առջեւ, իսկ ավելի ճիշտ կլինի ասել՝ հետ, հանդես եկանք, եթե կարելի է այսպես ձեւակերպել՝ գաղափարա-մշակության ծրագրով: Ռազմահայրենասիրական դաստիարակությանը միտված զրոյցներին գործուն կերպով արձագանքում էին մեր երիտասարդ ունկնդիրները՝ զինվորներն ու սպաները, իսկ երբ վրա հասավ գեղարվեստական ելույթների պահը, զինվորները մեզ ուղակի հիացրին՝ հանդես գալով եւ՝ պարով, եւ՝ երգով, եւ՝ ասմունքով: Շարքային Հայկ Սահակյանը նվագում էր իր ձեռքով եղեգից սարքած շվիի, Նվեր Ենգիբարյանը՝ նույնպես իր ձեռքով կաշվից պատրաստած «դիոլի» վրա: Հայկը նաև հայրենասիրական երգ երգեց, ասմունքեց...

Հետո տղաները հնչեցրին մեր ավանդական քոչարին, եւ զինվոր ու հյուր՝ խառնված իրար, պարեցինք այն պարը, որը ժամանակին Ռայխստագի պատի մոտ պարել են մեր խիզախ հայրերն ու պապերը: Հիմա էլ դեռ աչքիս առջեւն է շարքային Անդրանիկ Պողոսյանի թափով պարը: Ընդամենը երեք օր հետո նա զորացրվելու էր ծառայությունից, երեսի շատ էր կարոտել մորը, մայրիկներին նվիրված երգ երգեց...Կլանետի վրա իր նվագով բոլորիս հիացրեց զինվոր Կարեն Ղազարյանը:

Տղաներին շատ դուր եկավ ՊՆ ռազմահայրենասիրական դաստիարակության եւ ՀԿ-ների հետ կապերի բաժնի սպա Դավիթ Սաֆարյանի ելույթը, իմ մայրական պատգամը, ընդհանրապես, բոլորի ելույթներն էլ ներծծված էին հայրենասիրության ոգով, տղաներն էլ լսում էին ուշադիր: Վիլեն Ղահրամանյանն իր համար եւս հերթական այցին զինվորներին ող-

ջունեց ոչ միայն իր, այլև՝ ղեկավարած դպրոցի ուսուցչական եւ աշակերտական կոլեկտիվների, ինչպես նաև՝ երեխաների ծնողների անունից ու նրանց հանձնեց նշված բոլորի ջանքերով հայրայրված ամանորյա առատ նվերները: Դատարկած եռն չել եկել նաև վերապատվելի Արամ Սկրտչյանը, որը զինվորներին պատգամեց լինել լավ հայրենասեր եւ ազնիվ քրիստոնյա: Զինվորներին շատ ուրախացրին եւ հուզեցին Շ. Ազնավորի անվան մշակութային կենտրոնի սաների սրտառուց նամակները, որոնք ընթերցեցի ես, քանի որ կենտրոնի տնօրենը դիրքայինների մոտ գնացածների հետ էր...

Միջոցառմանն առավել ակտիվ մասնակցածներին ես մեր կազմակերպության կողմից պարզեւատրեցի շնորհակալագրերով, ինչպես նաև իմ հեղինակած գրքերից նվիրեցի նրանց: Հատուկ շնորհակալագրի արժանացան մարտական ծառայության մեջ հատկապես աչքի ընկած՝ կրտսեր սերժանտ Էդիկ Հայրյանը, սերժանտ Գուրգեն Գրիգորյանը, շարքայիններ Արման Եսայիլյանը, Խաչատոր Սարգսյանը, Վաղարշակ Սկրտչյանը եւ Կարեն Գրիգորյանը: Տղաները հայրենիքին ծառայում են տված երդմանը հավատարիմ:

Դիրքապահների մոտ եւս հետաքրքիր անցավ հանդիպումը: Այցի օրը համընկել էր երկու զինվորի՝ Արսենի եւ Արմենի ծննդյան օրվա հետ, եւ տղամերն այն նշում էին սորթով, որը պատրաստել էին տարբեր չոր թխվածքարլիթներից, չգիտես ինչով՝ սիրուն էլ գունավորել-զարդարել էին այն:

Ծուն էլ կա տղամերի մոտ: «Աղբբեջանին դավաճանած» Աստծո չորրոտանին մի օր անցավ սահմանն ու եկավ տղամերի մոտ: Պարզ երեսում էր, որ հետ դառնալու ցանկություն չունի եւ այդպես էլ մնաց: Նրան կերակրեցին, հետո էլ որոշ «գիտելիքներ» հաղորդեցին, ու հիմա իր սուր հոտառությամբ դիրքապահների օգնականն է դարձել. մի շրջյուն լսի առջեւից,

կողքից՝ խսկույն «իմաց է տալիս»...

Հրաժեշտից առաջ ես զորամասի շտաբի պետին եւ հրամանատարի ԱՀՏՍ գծով տեղակալին պարզեւատրեցի մեր կազմակերպության պատվոզով, ինչպես նաև նրանց խնդրեցի հրամանատար Հովհակ Արքահամյանին հանձնել մեր «Հայրենիք եւ հավատ» մեդալը: Զորամասում, ի դեպ, հանդիպեցինք եւ ՀՀ ԶՈՒ մարտական պատրաստվածության վարչության պետ, գնդապետ Տիրան Խաչատրյանի եւ ՊԲ 2-րդ ՊԸ Ն. զորամասի հրամանատար, գնդապետ Գեղամ Գաբրիելյանի հետ: Նրանք ողջունեցին մեր նախաձեռնությունը՝ շեշտելով, որ նման հանդիպումները զգալիորեն բարձրացնում են զինվորների տրամադրությունն ու մարտական ոգին:

Ինչպես վերադարձին ասաց Արմեն Հովսեփյանը՝ մենք զնացել էինք շնորհավորելու մեր բանակային տղաների Ամանորը, խրախուսելու եւ ոգեւորելու նրանց, բայց իրականում ինքներս նրանց կողմից ոգեւորված վերադարձանք Ստեփանակերտ:

«ՆՄԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ԼԻՑՔ ԵՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ԲՈԼՈՐԻՄ»

2015թ. դեկտեմբերի 25-ին ԼՂՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի մի խումբ անդամներ, նախարարի համապատասխան հրամանի իրականացման շրջանակներում, ՊԲ հրամանատարի՝ ԱՀՏՍ գծով տեղակալ, գեներալ-մայոր Վարդան Բալայանի, ՊՆ ռազմահայրենասիրական բաժնի պետ, գնդապետ Բարեղան Մուրադյանի եւ վերոհիշյալ խորհրդի նախագահ Վիտյա Երամիշյանի դեկապարությամբ, Ստեփանակերտի դպրոցների ներկայացուցիչների հետ միահին եղան ՊԲ գորամասերում՝ շնորհավորելու մեր զինվորականների Ամանորը:

Այն ենթախմբի, որին որպես հասարակական խորհրդի անդամ ամրացված էի ես, կորիզը կազմում էին մայրաքաղաքի համար 6 դպրոցի ներկայացուցիչները՝ տնօրեն Վիլեն Ղահրամանյանը, զինուեկ Արմեն Մարտիրոսյանը, դաստիարակչական աշխատանքների գծով դպրոցի փոխտնօրեն Նաիրա Աբրահամյանը, ուսուցիչներ, աշակերտներ:

Զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներից առկա էին Արցախի հանրային հեռուստատեսության լրագրող Գենադի Երեմյանը, օպերատոր Մերուժան Մարտիրոսյանը: Խմբին ուղեկցում էին ԼՂՀ ոստիկանության Ստեփանակերտի ոստիկանության վարչության՝ անշափահասների գործերի գծով տեսուչ, ճանապարհային ոստիկանության ավագ լեյտենանտ Էլինա Սիմասյանը, ՇՊ այլ աշխատակիցներ:

Խումբը եղավ Պաշտպանության բանակի առանձին հետախուզական գումարտակում:

...Զորամաս հասնելուց եւ հրամկազմի հետ ծանոթանալուց

հետո բոլորը հավաքվեցին զինվորական ճաշարանի դահլիճում: Զինվորականների դեմքերից երեսում էր, թե որքան ուրախ էին այդ հանդիպման համար:

Աշակերտները հանդես եկան գեղարվեստական հագեցած ծրագրով. երգ, պար, ասմունք, նախատոնական սրամտություններ, բարեմաղթանքներ:

Քույր ու եղբայր Արմեն և Նունե Ոսկանյանները հիանալի կատարեցին «Կորիվ ենք գնում ախաղերս ու ես» երգը, Էրիկ Արամյանն արտասանեց Արցախի մասին բանաստեղծություն, հայկական պար պարեցին երկվորյակներ Ալվինա և Մարիա Աքանեսյանները: Ապա զինվորականներն ու աշակերտները միասին կատարեցին «Հայկական բանակ» հանրաճանաչ երգը: Դահլիճը դղրդում էր ծափերից:

Զմեռ պապ-Արմեն Ավանեսովն ու Ջյունանուշ -Անի Զաքարյանն իրենց վարպետ դերակատարմամբ հիացրին բոլորին: Հանդիպման գեղարվեստական մասն ավարտվելուց հետո «Զմեռ պապն» ու «Ջյունանուշը» զինվորականներին բաժանեցին մեզ հետ տարած 130 կտոր ամանորյա նվերները:

Պաշտպանության բանակում արդեն մեկուկես տարի ծառայող կրտսեր սերժանտ Հայկ Գալստյանն իր բոլոր ծառայակիցների անունից շնորհակալություն հայտնեց խմբին՝ միաժամանակ վստահեցնելով, որ հետախուզական գումարտակը միշտ կազմուապատրաստ է հայրենիքի պաշտպանությանը, պատրաստ է դիմագրավելու նենզ ու դավադիր թշնամու ոտնագուրյունները, հաղթահարելու ամեն դժվարություն՝ գերազանց ծառայություն ապահովելու համար: Վիլեն Ղահրամանյանն ու ես էլ մեր և Արցախի ողջ ժողովրդի անունից շնորհակալություն հայտնեցինք բանակին՝ հայրենյաց սահմանների պաշտպանությունը պահանջված կերպով իրականացնելու համար եւ բոլորին մաղթեցինք ուրախ ու անփորձանք Ամա-

նոր, ինչպես նաև՝ անփորձանք տարի... Ես մեր կազմակերպության անունից ԱԿԱՀՄ «Հայրենիք եւ հավատ» մեղալ հանձնեցի առանձին հետախուզական գումարտակի հրամանատար, փոխգնդապետ Արմեն Պետրոսյանին:

Հրամանատարը, երախտագիտության խոսք հղելով խմբին՝ հույս հայտնեց, որ ստեղծված կապը կշարունակվի ու կխորանա: Նման հանդիպումները, շեշտեց Ա. Պետրոսյանը, շատ կարեւոր են այն առումով, որ եւ՝ գուտ մարդկային, եւ՝ մարտական լիցք են հաղորդում բանակում ծառայողներին:

Մեր բանակն ու ժողովուրդը երկմիասնություն են եւ այդպես կլինի միշտ. գումարտակին հրաժեշտ տալիս այս միտքն էր, որպես բովանդակալից օրվա ընդհանրացում, պտտվում յուրաքանչյուրիս ուղեղում:

**ԲԱՐՈՅԱԿԱՆ ՍԱՏԱՐՈՒՄԸ ԲԱՆԱԿԻՆ
ՊԱՐՏՔ Է ՈՒ ԶՀՆԱՑՈՂ ԽՆԴԻԲ**

Այս անգամ՝ 2016 թվականի հունվարի 12-ին, մենք՝ մի խումբ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, իսկ ավելի կոնկրետ՝ ԱՀ ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գիրգորյանս, ԶԱՀՄ նախագահ Արթուր Առատամյանը, Շ. Ազնավորի անվան մշակութային կենտրոնի տնօրեն Արմեն Հովսեփյանը, «Առաջ, Արցախ» ԵՀԿ նախագահ Արթուր Հայրապետյանը, ԱՀ ՊՆ ռազմահայրենասիրական դաստիարակության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի սպա, կապիտան Նունե Աբաղյանը, եղանք Պաշտպանության բանակի 4-րդ պաշտպանական շրջանում:

...Ն. զորամասի հրամանատարի՝ ԱՀՏԱ գծով տեղակալ, փոխգնդապետ Արա Քամալյանի եւ հրամկազմի մյուս անդամների, գնդի երեց Գարիկ սարկավագ Ասրյանի հետ նախնական քոռուցիկ գրույցից հետո եղանք գումարտակներում, որտեղ զինվորների, հատկապես՝ ժամկետային ծառայությունը նոր սկսածների, հետ ծայր առավ անկեղծ ու բաց խոսակցություն: Զրուցում էինք նրանց սրտին հարազատ թեմաներից՝ տան, հարազատների, սիրած աղջկա հանդեպ կարոտի, ծառայության առաջին շրջանին հատուկ՝ ֆիզիկական ծանրաբեռնվածությունների հաղթահարման դժվարության, ընտանեկան նեղ շրջանակին փոխարինած մեծ կոլեկտիվին որքան հնարավոր է՝ արագ ու սահուն մերվելու անհրաժեշտության ու կարողության ձեռք բերման մասին / ճաշարանում, օրինակ, զինվորը ճաշելու է նատում իր նման մեկուկես հազարի հետ/: Փոխստահության ջերմ մթնոլորտում էր ընթանում գրույցը, հետեւապես եւ՝ գրիություն պատճառում երկու կրղմին:

Այդպես էլ՝ անբռնազրոսիկ եւ աննկատելի, ընդլայնվեց խո-

սակցությունը՝ շոշափելով արդեն ավելի լուրջ խնդիրներ. սահմանի, դիրքերի պաշտպանություն՝ հաճախակի լարվող իրադրությունում, զինվորական կարգապահության խստիվ հետեւում, մարդու համար բնական զգացումներից մեկի՝ վախի հաղթահարման «մեխանիկա», կամքի ու կարողության մշակում սպաների, ավագ ընկերների, մարտական ծառայությունում արդեն որոշակի փորձառության տեր զինվորների աջակցությամբ, հավատարմություն՝ տված զինվորական երդմանը եւ այլն:

Պետք է խոստովանեմ, որ եթե մեր՝ հյուրերիս խոսքը, խոսք էր խրախուսման ու ոգեւորման, ապա տղաների խոսքն էլ խոսք էր վստահեցման՝ առ այն, որ հայրենիքի սահմանները գտնվում են հուսալի ձեռքերում:

Ի դեպ ասեմ, որ նկատեցի, թե մեր այցին միացած՝ ստեփանակերտցի Արսեն Հայրապետյանի ելույթը, ով նոր է ավարտել պարտադիր զինվորական ծառայությունը քանակում, ինչպիսի հետաքրքրությամբ էին լսում ունկնդիրները: Արսենը նրանց հետ խոսում էր «իրենց իսկ լեզվով», առավել մատչելի, քան կարող էր մեզանից մեկը...Երիտասարդը խոսում էր զինվորական հիմնական անհրաժեշտությունների շուրջ, որոնք կարծես թե մանրութներ են, բայց իրականում շատ կարեւոր են: Զինվորը հավասարապես պետք է լավ տիրապետի եւ դրանց:

Մենք տղաներին ուրախացրինք մեր տարած նվերներով; Ինքներս ճաշարանում նստելով շարքային զինվորների կողքին՝ համտեսեցինք զինվորական խոհանոցի ճաշերից եւ մյուս բարիքներից՝ համոզվելով, որ հայ զինվորը սնվում է՝ ինչպես հարկն է:

Մեզ հետ զորամաս էինք տարել Շ. Ազնավորի անվան մշակութային կենտրոնի եւ Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանի սաներից կազմված մի խումբ, որը զինվորների

ու սպաների առջեւ հանդես եկավ մշակութային հագեցած ծրագրով: Նրանք կատարեցին հայրենասիրական երգեր, ազգային եւ այլ պարեր, ասմունքեցին, եւ նրանց հետ միասին հանդես էին գալիս զինվորները...

Տեսնել էր պետք հայրենյաց պաշտպանների գոհության եւ ուրախության որակը միջոցառման ողջ ընթացքում: «Արցախի բալիկներ» երգի-պարի համույթի անդամ Աննա Սկրտչյանը կատարեց բանակին նվիրված, ինչպես նաև՝ նայրական թեմաներով երգեր, երաժշտական ուսումնարանի սան, վոկալիստ Լուսինե Մարտիրոսյանը՝ մեծ ու փոքր հայրենիքներին /Հայաստան, Արցախ/ նվիրված երգեր, զորամասի 4-րդ զումարտակի 11-րդ վաշտի շարքային Արեն Հակոբյանը՝ «Կանգնիր, կանգնիր, կարուսել» երգը, որի մեղեդու տակ դահլիճում պարել սկսեցին բոլորը...

Նայելով տղաների ուրախ դեմքերին՝ մտածում էի այն մասն, թե որքա՞ն կարեւոր է, ուղղակի անհրաժեշտություն՝ հասարակական կազմակերպությունների, եւ, ընդհանրապես՝ քաղաքացիական հասարակության կողմից, հարազատ բանակին բարոյապես, անհրաժեշտ դեպքերում նաև՝ ամեն կերպ օժանդակելը:

Ես մեր կազմակերպության՝ **ԼՂՀ ԱԿԱՀՄ** մեդալով, պարզեւատրեցի զնո՞ի հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալ Արա Քամալյանին, շնորհակալազրերով՝ մարտական ծառայությունում աշքի ընկած՝ արդեն նշյալ 11-րդ վաշտի 8-րդ ջոկի հրամանատար **Լեռնիկ Բարսեղյանին**, զորամասի Դ-ԶՀՀ ջոկի հրածիգ -զենիքային, շարքային Գեւորգ Հարությունյանին, 10-րդ վաշտի 2-րդ ջոկի շարքային **Սաշա Խաչատրյանին**:

Վստահ եմ, որ այդ հանդիպման հաճույքն ու ոգեւորությունը երկար կուղեկցի բոլորին...

ՀԱՅ ԶԻՆՎՈՐԸ ԼԱՎ ԳԻՏԻ ՈՒՄ ԵՎ ԻՆՉ Է ՊԱՇՏՊԱՆՈՒՄ

Փետրվարի 9-ին հանրապետության պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի մի խումբ անդամներով եղանք Պաշտպանության բանակի Հյուսիսային ուղղության ստորաբաժանումներում՝ ծանոթանալու հայրենյաց պաշտպանի առօրյային, մեր խոսքն ասելու եւ ունկնդրելու՝ նրանցը: Պետք է խոստովանեն, որ մեր տեսածն ու լսածն ավելին էր, քան` պատկերացնում էինք...

Հենց սկզբից հանդիպեցինք զորամասի հրամանատարական կազմի հետ, ապա հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Արքուր Սկրտչյանի եւ սոցիալ-հրավական բաժնի սպա-հրավարան Սուրեն Սկրտչյանի ուղեկցությամբ եղանք գումարտակներում, մասնավորապես՝ չորրորդ եւ հինգերորդ: Վերջինիս 13- 14-րդ վաշտերի զինվորների հետ բավականին անկեղծ ու անկաշկանդ զրույցներ ունեցանք եւ ինչպես նման բոլոր դեպքերում՝ առաջին հերթին հետաքրքրվեցինք նրանց տրամադրությամբ ու ինքնազգացողությամբ: Տղաները մեզ շատ ուրախացրին իրենց այն պնդումով, թե ամեն ինչ նորմալ է, դժվարություններ, իհարկե, լինում են, բայց եւ՝ հաղթահարվում: Ել ի՞նչ զինվոր, որ դժվարության չհանդիպի, իրավացիուն նկատեց նրանցից մեկը, մեզ տղամարդ դարձնողը հենց դժվարության հաղթահարումն է:

Մեզ շատ ոգեւորեց, որ նրանց մարտական ոգին բարձր է: Դրանում համոզվեցինք նաև ոյլընթերից վերադարձած հերթափոխի հետ շփվելուց, խոսելուց: Բոլորս էլ զիտենք, թե սահմանին մեկ-մեկ ինչ աստիճանի լարվածություն է լինում... Մեզ առավել հետաքրքրողը նորակոչիկներն էին, ուստի զրույցներից եւ նրանց գումարտակի հետ: Խմբի չորս անդամներս էլ՝

հանրապետության խորհրդարանի պատգամավոր եւ Արցախյան պատերազմի վիրավոր Վարդգես Ուլուբարյանը, կրթության ու գիտության նախարարության աշխատակից Մուրադ Շահրամանյանը, «Հայրենյաց պաշտպան» ԵՀԿ փոխնախագահ Անդրանիկ Գրիգորյանը եւ տողերիս հեղինակը, նրանց կոչեցինք զինվորական կարգապահության անթերի կատարման, ռազմական գործի՝ ըստ ամենայնի յուրացման, հոգեկան արիության եւ ընկերական համերաշխության: Ինձ շատ դուր եկավ Վարդգես Ուլուբարյանի գրույցը տղաների հետ, խոսում էր, կարելի է ասել, «նրանց լեզվով» եւ շատ ջերմ ընդունվեց: Բոլորս էլ պատվիրեցինք լինել համարձակ, բայց եւ՝ զգույշ, հատկապես՝ դիրքային ծառայության ժամերին...

Հենրիկ Սարգսյանը վարդենիսցի է, բարձրագույն կրթության տեր: Տասնինը ամիս է՝ զինծառայության մեջ է, սերժանտ է: Քիչ փորձ ունեցողներին օգնում է, բացատրում, հուսադրում: Ասում է՝ մենք երկու մեծ պարտականություն ունենք՝ լավ ծառայել հայրենիքին եւ ողջ վերադառնալ տուն: Տղան զիտի ինչ է ասում. տանն իրեն սպասում են մայրն ու տասնվեցամյա քույրը... Ընտանիքի հենասյունն ինքը պիտի լինի: Զորամասում մեր գտնվելու համեմատաբար կարճ միջոցին անգամ /դե, մեկ օրն ի՞նչ է/ նկատեցինք եւ սպաների /մասնավորապես՝ հիմգերորդ ուսումնական գումարտակի հրամանատար Պողոս Պետրոսյանի, վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Հարութ Սինասյանի/ հոգատար վերաբերմունքը զինվորների նկատմամբ: Խիստ ու պահանջկոտ են՝ գործում եւ հոգատար՝ բոլոր պահերին:

Շարքային Վաչագան Բաղդասարյանն ինչպե՞ս էր հպարտ ու վրա տալով՝ պատմում.

-Գիտե՞ք, որ պաշտպանության նախարարի հետ ենք ճաշել... Այո՛, հենց իր՝ գեներալ-լեյտենանտ Լեւոն Մնացականյա-

նի հետ: Եկել էր մեր Ամանորը շնորհավորելու, բա՛՛: Դիրքերն է բարձրացել, այնտեղ էլ բաժակ բարձրացրեց՝ ի պատիվ բանակի ու հայրենիքի: Հատուկ մեր՝ զինվորներիս, կենացը խմեց... Հիմա էլ եմ ակամայից ժատում հիշելով տղաների անկեղծության աստիճանը: Հովհաննես Ջոշարյանի /Երեւանից է, Աջափնյակում է բնակվում ընտանիքը/ ասածը մեխված մնում է հիշողության մեջ: Պատմում էր՝ ինչպես է առաջին անգամ դիրքապահության գնացել:

-Երբ հասանք այնտեղ, տեսա՝ ոտքերս թուլանում են...Ամոք չլինի ասելը՝ վախսից: Զգոում էի ցույց չտալ, չեր լինում... Բայց երբ դիտակետից նայեցի եւ ընդամենը երկու հարյուր մետր հեռավորության վրա տեսա Թավքառա թուրքական գյուղն ու այնտեղ՝ հակառակորդի անցուղարձը, արյունս խաղաց երակներումս, ու ինքս ինձ ասացի՝ լա՛վ նայիր, դրանք քո ժողովրդի ու հայրենիքի երդվյալ թշնամիներն են, դու պետք է քո հողը պաշտպանես նրանց ոտնձգությունից: Պատկերացնու՞ն եք, վախս՝ ոնց որ միանգամից սրբած՝ դեն զցած... Հիմա հանգիստ գնում եմ «գործիս», պարզապես զգույշ եմ մնում, որ կույր կամ նշանակետային գնդակի թիրախ չդառնամ: Էղքան բան:

Հովհաննեսն էլ է ասում՝ տանն իրեն սպասում են մայրն ու քոյրը... Տե՛ր Աստված, դու նրանց բոլորին պահապան լինես:

Շարքային Արմեն Կոթույանի համար Արցախը նոր աշխարհ է, պատմական հայրենիքի՝ իր համար նոր բացահայտվող մի մասը: Ինքը Զավախքից է, բայց քանի որ Երեւանի պոլիտեխնիկականում է սովորում ու Երեւանյան գրանցում ունի, երկրորդ կուրսից գորակոչվել՝ այստեղ է ծառայում: Նա էլ է ասում, որ զինվորը խստորեն պետք է հետեւի հրահանգներին, թեթևամտություն չանի, օրինակ՝ դիրքում առանց սաղավարտի գլուխը չբարձրացնի եւ այլն: Ինչ մնում է դիրքերին, դրանք

շատ ապահով են սարքված եւ գնալով ավելի են ամրապնդվում:

Ըստ ջերմուկցի, կրտսեր սերժանտ Ռուբիկ Եսայանի՝ հատկապես լավ ծառայող տղաները խրախոսանքի են արժանի եւ օրինակ են նորակոչիկների համար: Այդպես, անկեղծ զրույցի ընթացքում, ամեն մեկը հայտնում էր իր կարծիքը:

Մենք խմբով այցելեցինք եւ բուժկետ: Այն նորակառույց է ու հազեցած պահանջվող ժամանակակից սարքերով ու մյուս պարագաներով, ստացիոնար էլ կա, հարկավոր եղած դեպքում վիրահատություններ են կատարվում: Զորամասի բժշկական ծառայության պետ Սարգիս Վլասյանը մեզ բացատրեց, թե տղաներից ով ընթացիկ բուժման ինչ խնդիր ունի:

Այդ օրը ծանրացանք եւ զորանոցի ննջարանի, ճաշարանի եւ վերջինիս խոհանոցի սանիտարա-հիգիենիկ վիճակին ու զոհ մնացինք տիրող մաքրությունից: Ճաշարանի պետ, ավագ ենթասպա Արմեն Բլուզյանի աշքից չի վրիպում ոչինչ... Ճաշի ժամանակ տղաների հետ զրույցից, ինչպես նաև անձամբ մեր կատարած համտեսումներից համոզվեցինք, որ նրանք ստանում են ամենօրյա առողջ ու համով սնունդ: Ճիշտ է, ցանկություն հայտնեցին, որ ճաշացուցակում քաղցրավենիք էլ լինի...

Օրվա մեր ծրագիրը եզրափակվեց Թալիշի ակումբում սպայական ու զինվորական կոնտինգենտի հսկաքով, որի ժամանակ մեր ու զինծառայողների միջեւ տեղի ունեցավ «հարց ու պատասխանի ժամ»: Վերջում ես մեր Սիության անունից պատվողիր հանձնեցի զինվորական ծառայությունում հատկապես աշքի ընկած շարքային Լիպարիտ Արրահամյանին եւ շնորհակալագիր՝ շարքային Անդրանիկ Գալոյանին, ինչպես նաև հավաքի մասնակիցներին բաժանեցի իմ հեղինակած գրքերից:

Ընդ որում, իմ առաջարկությամբ «քեկնածուների ընտրու-

թյունը» տեղի ունեցավ ոչ թե հրամանատրության, այլ հենց իրենց՝ հավաքին ներկա զինվորների կողմից: Մեր այդ, այսպես ասած՝ ժողովրդավարական քայլը, դուր էր եկել եւ՝ սպաներին, եւ՝ զինվորներին: Տեսնել էր պետք տղաների անկեղծությունը եւ ուրախությունը՝ պարզեւատրված ընկերների համար...

«ՊԵՏՔ ԼԻՆԻ ԿԾԱՌԱՅԵՄ ԱՎԵԼԻՆ ԷԼ»

Կերնագիրն առա չակերտների մեջ՝ որպես ուրիշի խոսք:
Կիսկ այդ ուրիշը պաշտպանության բանակի, որքան էլ
որ տարօրինակ կամ ամբողջական թվա՝ նորակոչիկ է, զյումբեցի
Անդրանիկ Շահշյանը: Տղաները պատմում են, որ միայն նա
չէ, որ արագ է հարմարվել զինվորական կյանքին եւ ընդհան-
րապես, դժգոհ չէ կյանքի նոր վիճակից: Բանակն, ասում են,
տղամարդու տեղ է, եւ իրենք ոտք են դրել հենց տղամարդ դառ-
նալու ճանապարհ... Ասում են՝ մեր ազգը ճակատագրի քե-
րումով շատ է նվազել, եւ հայ մայրերն այդ կապակցությամբ
անելիք շատ ունեն՝ երկրին պարզեւելու շատ ու շատ զավակ-
ներ: Ուրիշ ելք չկա, հայոց հայրենական սահմանների պաշտ-
պանությունը կախված է մեզանից:

Ասել, որ մեզ՝ «Սատարենք հարազատ բանակին» կոչի
Նախաձեռնող խմբի անդամներիս համար, տղաների նման
դատողությունն ու տրամադրությունը հաճելի էր եւ ուրախալի՝
նշանակում է ոչինչ չասել: Ես պատմում եմ մեր հերթական այ-
ցից, որը տեղի ունեցավ ս.թ. փետրվարի 17-ին: Այս անգամ
տղաների մոտ էինք զմացել համեմատաբար թեթև կազմով.
Ես էի, մեր կազմակերպության երկու անդամ՝ Սասուն Հովսեփ-
յանն ու Կարեն Գրիգորյանը /անհայտ կորած ազատամար-
տիկների զավակներ են/, Ազնավորի անվան մշակութային
կենտրոնի տնօրեն Արմեն Հովսեփյանը՝ «Արցախի բալիկ-
ներ»-ից մի քանիսի հետ միասին, երաժշտական ուսումնարա-
նի սան Լուսինե Մարտիրոսյանը, հանրային հեռուստատեսու-
թյան լրագրող Գենադի Երեմյանն ու օպերատոր Աերոլիֆան
Մարտիրոսյանը եւ, իհարկե, պաշտպանության նախարարու-
թյան ներկայացուցիչը, տվյալ այցին՝ ԱՀՏԱ բաժնի մշակու-
թա-լրտավորչական աշխատանքների բաժնի պետ, փոխգն-

դապետ Գառնիկ Ավանեսյանը:

Առաջինն այցելեցինք ՊԲ թիվ 36534 գորամաս:

Քննականաբար, սկզբում ծանոթացանք հրամկազմի հետ, եւ տեղի ունեցավ քոռուցիկ գրույց, որը, սակայն, չնայած կարճ լինելուն՝ խոր հետք թողեց մեզ վրա: Դե, դատեցեք ինքներդ մենք, ինչպես պարզվեց, գտնվում էինք որպես մարտական հերթապահություն կրող՝ Զինված ուժերում առաջին տեղը գրաված գորամասում... Եվ ոչ միայն դա. նաև՝ Պաշտպանության բանակում նույն գծով լավագույնը հանդիսացող, ապա եւ՝ Ռազմական խորհրդի «Պատվո դրոշը» նվաճած գորամասում:

ԱՀՏՍ գծով գորամասի հրամանատարի տեղակալ Արսեն Աղարելյանի հետ շրջեցինք ամենուր. եղանք եւ զինվորական ճաշարանում /խոհանոցով հանդերձ/, եւ ճաշատեսակներից համտեսեցինք, ինչպես ասում են՝ սեփական համապատասխան զգայարաններով համոզվելու, թե ինչպիսի սնունդ է տրվում մեր զինվորին: Արդյունքում եւ՝ մաքրությունից գոհ մնացինք, եւ՝ սննդի բազմազանությունից ու համից: Ես սա փաստում եմ, ինչպես կփատեի, եթե ձեռքս դրած լինեի Սուրբ գրքի վրա... Բուժկետում էլ եղանք, այդ թվում եւ՝ վերջինիս մեկուսարանում, որտեղ սեղոնային գրիպով հիվանդներն են ապարինվում:

Ծուրջ 250 նորակոչիկների ներկայությամբ համերգ կազմակերպեցինք. երգեցին Լուսինեն եւ «Արցախի բալիկներ»-ից Աննա Մկրտչյանը, հետո նրանց միացողներ եղան զինվորներից. կրտսեր սերժանտ Երեմ Կարապետյանն ասմունքնեց Պ. Սեւակի ստեղծագործություններից, սերժանտ Միսիքար Սարգսյանը հոգեպարագ ոգեշնչմամբ կատարեց «Մարտիկի երգը»: Ես նրանց պարզեւատրեցի. Երեմին՝ մեր կազմակերպության շնորհակալագրով, Միսիքարին՝ պատվողարով:

Փոխգնդապետ Աղարեկյանին նույնպես պատվոզիր հանձնեցի:

Այսուհետեւ, նորակոչիկների չորս վաշտի /13-14-15-16-րդ/ բաժանեցինք մեզ հետ տարած նվերների կեսը, որովհետեւ այդ օրը մեկ ուրիշ զորամաս էլ պիտի այցելեինք: Հիմնականում լայն տեսականու քաղցրավենիք էինք տարել, ինչն, իդեալ, շատ էր տղաների սրտով...

Ծանոթությունը թիվ 35383 զորամասի հետ նույնպես սկսվեց հրամկազմի հետ հակիրճ զրույցից, հետո ամցանք նորակոչիկների մոտ եւ նրանց համար կրկնեցինք ծրագիրը. նվերների հանձնում, համերգ, հայրենասիրական թեմայով զրույցներ: Հրամանատարությանն ու զինվորական ողջ կոնտինգենտին փոխանցեցինք նվերների հանգանակման գործում մեզ ձեռք մեկնած «Արցախազ» ընկերության տնօրեն Սեյրան Միքայելյանի, «SBS» ընկերության տնօրեն Բորիս Բարսեղյանի եւ «Պետրոլ-սերվիս» ընկերության տնօրեն Էդուարդ Վերդյանի մաղթանքը՝ «հպարտ ենք ձեզնով, տղանե՛ր, եւ պատրաստ՝ միշտ ու ամեն ինչով օգնելու բանակին, նրան թիկունք կամգնելու»:

Ես իմաց հետ օրինակներ էի վերցրել մեր կազմակերպության գրքերից եւ դրանք հանձնեցի զորամասի գրադարանին: Այդտեղ էլ լավ ծառայող տղաներից երկու հոգու խրախուսեցի շնորհակալագրով ու պատվոզով: Պատվոզի արժանացավ եւ փոխգնդապետ Սիեր Սարգսյանը, իսկ զորամասի հրամանատար Կարեն Գրիգորյանին հանձնեցի ԱԿԱՀմ «Հայրենիք եւ հավատ» մեդալ: Բանն այն է, որ նա, ինչպես պարզվեց, մեր կազմակերպությունում ժամանակին անհայտ կորած գրանցված, հետո թուրքական գերությունից հրաշքով փրկված՝ մուշկապատցի Շահմուրադ Գրիգորյանի որդին է: Ինքն էլ Արցախյան պատերազմի գործուն մասնակից եւ չորս անգամ վի-

բավորված... Հանդիպումը բավականին հուզիչ էր: Կարենն անգամ այն հիշեց, թե ժամանակին ինչպես եմ այցելել իրենց գյուղ ու տուն, հետո էլ փոքրիկ կինոնկար պատրաստել՝ հորը եւ գերությունից փրկված մի քանի ազատամարտիկի նվիրված:

Մեր բանակը մեր անվտանգության միակ երաշխավորն է, ու մենք՝ Արցախի ժողովուրդս, հասարակությունը, պետք է հնարավոր ամեն ինչով աջակցենք նրան, բարձրացնենք ծառայող տղաների մարտական ոգին, ամեն ինչ անենք՝ նրանց առողջ եւ անվտանգ ծառայության համար:

ՀԱՎԱՏՈՎ ՈՒ ՈԳՈՎ ԼԻՆԵԼ ԶԻՆՎՈՐԻ ԿՈՂՔԻՆ

Արցախում շարունակվում է «Սատարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խմբի առաքելությունը: Շարունակվում է, որովհետեւ բանակը միշտ պետք է իր թիկունքում, ավելին՝ իր կողքին, զգա ժողովրդի շնչառությունը եւ սատարող ձեռքը: Շարունակվում է, որովհետեւ դա ժամանակավոր ձեռնարկում չէ, այլ՝ բարոյառազմավարական մշտական դիրքորոշում եւ կոնկրետ գործ:

Այս անգամ՝ ս. թ. Նախաձեռնող խումբը, մասնակցությամբ իմ եւ պատերազմի ժամանակ անհայտ կորած խաղաղ բնակչութու դուստր Նադեժդա Նազարյանի, Ստեփանակերտ քաղաքի կրթության, մշակույթի եւ սպորտի աշխատողների արհկազմակերպությունների «Այգեշատ» միության նախագահ Ալվինա Ծատրյանի, Շ. Ազնավորի անվան կենտրոնի տնօրեն Արմեն Հովսեփյանի «Արցախի բալիկներ» համույթով հանդերձ/, այցելել է հարավ-արևելյան ուղղության երեք գորամաս: Մեզ հետ տարել ենք մեծ քանակությամբ նվերներ՝ քաղցրավենիք եւ այլ մթերքներ, հիգիենայի պարագաներ, հուշանվերներ, որոնք տեղերում բաժանել ենք գումարտակներին:

Այդ ամենի ձեռքբերմանը հովանավորչության սկզբունքով Նախաձեռնող խմբին օգնել են «Բեյզ մեթոլ» ընկերությունը, «Մեշտա» արտադրական կոռպերատիվը, անհատական կարգով՝ վերոնշյալ Նադեժդա Նազարյանը եւ, իհարկե, իր բժինն է ներդրել ԱԿԱՀՄ-ը:

...Հարավային ուղղության Ն. զորամասում մեզ դիմավորեցին հրամանատարի տեղակալներ՝ գնդապետ Դավիթ Դավթյանը, մայոր Պարգևի Մարտիրոսյանը, մայոր Արտակ Վանյանը: Հանդիսավոր հավաքում հրամանատարի՝ ԱՀՏԱ գծով

տեղակալ Ա. Վանյանն ընթերցեց «Մեր բանակը հուսալի ձեռքերում է» թեմայով շարադրությունների մրցույթի հաղթողին՝ զորամասի հրամանատարի հրետանային գծով օգնական Ռոմա Լալայանին, ձեռքի ժամացույցով պարզեւատրելու մասին ԼՂՀ Պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Լեւոն Մնացականյանի հրամանը, ես էլ նշված նվերը հանձնեցի զինծառայողին: ԱԿԱՀՄ կողմից ինքը էլ լրվագազարդ հուշանվեր էի տարել, որը նույնակա հանձնեցի հասցեատիրոջը, ինչպես նաև ԱԿԱՀՄ «Հայրենիք եւ հավատ» մեղալով պարզեւատրեցի ԱՀՏՍ գծով տեղակալին:

Այսուհետեւ, տեղի ունեցավ մշակութային միջոցառում, հնչեցին հայրենասիրական ելույթներ, հայրենյաց սահմանն ամուր պահելու պատգամներ, համույթը հանդես եկավ գեղարվեստական ծրագրով՝ երգ, պար, ասմունք: Ցնցող էր պատկերը, երբ զինվորները երեխաների հետ կատարեցին հայոց հայտնի եւ հնագույն պարը՝ «Բերդպար»...Ինչպես տեսնում եք, թեեւ մշուշ էր իշնում այդ պահին, մեր լուսամկարիչը բաց շրողեց առիթը՝ անմահացնելու այդ պահը, այնպես որ նկարի նվազ պարզության համար, կարծում ենք, մեզ կների ընթերցողը...

Մինչ թնդում էին երգն ու պարը, ես անկեղծ ու ջերմ մթնոլորտում նույնիսկ առանձնազրույց ունեցա զինծառայողներից նի քանիսի հետ: Պայմանագրային ծառայող Սամվել Ավանեսովը պատմեց, որ ինքը նախկին բարվեցի է, իրենց ընտանիքն Արցախ է բռնագաղթել Բաքվի հայտնի ջարդերի ժամանակ: Կին ու երեխաներ ունի, ապրում են Մարտունու շրջանի Զիվանի գյուղում: Ասում է՝ մեր բանակի վաղվա-մյուս օրվա երկու զինվոր է մեծանում իր տանը... Սարո Պետրոսյանը պայմանագրային արդեն տասը տարվա ստաժ ունի եւ գտնում է, որ պարտադիր զինծառայությամբ անցնողների կողքին իր նման-

ների ներկայությունը շատ կարեւոր է եւ՝ բարոյահոգեքանական առումով, եւ՝ որոշակի փորձի փոխանցման: Լեյտենանտ Ռոբերտ Սոաքելյանը Երեւանի «պոլիտեխնիկի» շրջանավարտներից է, տանը ծնողներ ու քույր ունի եւ ասում է՝ պարտադիր ծառայողներից յուրաքանչյուրն էլ թիկունքում հարազատներ ունի, եւ մեր պարտքն է օգնել նրանց՝ ծառայությունը պահանջվածի ու զուտ մարդկային առումով... համեմատար թեթեւ տանելու համար:

Ազնիվ խոսք, անհնար է նկարագրել զինծառայողների ուրախությունն այդ հանդիպման համար: Նրանք անընդհատ ցանկություն էին հայտնում, որ նման հանդիպումները լինեն պարբերական...Հանդիպման ավարտին տեսնվեցինք ու զրուցեցինք նաև զորամասի հրամանատարի՝ փոխգնդապետ Մարտին Զհանգիրյանի հետ. դիրքերից էր վերադարձել...

Երկրորդ զորամասում եղանք օրվա երկրորդ կեսին: Մարտական պատրաստության գծով զորամասի հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Արթոր Քոչարյանը մեզ ծանոթացրեց հրամկազմի հետ, ապա նրա եւ զորամասի սպա-հոգեքան, մայոր Միքայել Աբրահամյանի ուղեկցությամբ հանդիպում ունեցանք 3-րդ, 4-րդ եւ 5-րդ զումարտակների հետ: Այստեղ փոխգնդապետն անձամբ ընթերցեց պաշտպանության նախարարի հրամանը՝ իրենց զորամասի միանգամից երեք զինծառայողի պարգևատրման մասին՝ որպես վերոնշյալ շարադրությունների մրցույթում մրցանակային տեղեր գրավածների, ինչպես նաև հանձննեցինք նվերները: Հարկ է նշել, որ ուազմահայրենասիրական թեմաներով ամենամյա օրինակելի շարադրությունների մրցույթ սահմանելու գաղափարը սրանից ինը տարի առաջ հղացել է մեր կազմակերպության կողմից, եւ առաջին տարվա թեման նվիրված է եղել Ազատամարտում անհայտ կորած տղաներին... Այդ կարեւոր գործին սրտանց

աջակցել են կրթության եւ գիտության նախարարությունը /կրթության Ստեփանակերտի քաղաքային քաժնով հանդերձ/, ինչպես նաև՝ պաշտպանության նախարարությունը/:

Հետաքրքիր անցավ մշակութային միջոցառումը: Զգացինք, որ տղաները պարզապես ծարակ են նման հանդիպումների: Մենք նրանց ոգեւորեցինք, նրանք էլ՝ հաստատապես մեզ...- Միայն նման հանդիպումների ընթացքում է մարդ հասկանում, թե ինչ աստիճանի կարենոր է նախաձեռնող խմբի կատարած առաքելությունը՝ բանակ-ժողովուրդ կապի ամրապնդման շրջանակում: Մեզ հետ տարած ապրանք-նվերների երկրորդ քաժնը քաժանելով գումարտակներին եւ ավարտած համարելով օրվա առաքելությունը՝ խումբը վերադարձավ Ստեփանակերտ: Մեզանից յուրաքանչյուրի ձեռքին կար թանկ պարգետ՝ մեր զինվորների նվիրած ծաղիկները...

**ԱՌԱՋԻՆ ՄՈՏՈՀՐԱՎԱՅՐԻՆԵՐԻ ՄՈՏ՝
ԱՎԱՆԴԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵԾ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՄՔ**

«Մատարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խմբի հերթական հանդիպումը ԱՀ ՊԲ հերթական ստորաբաժանման հետ տեղի ունեցավ 2016 թվականի մարտի 17-ին: Այցելեցինք բանակի Հյուսիսային ուղղության առանձին մոտոհրածգային զորամաս: Խմբի կազմում կային եւ՝ իին, եւ՝ նոր անդամներ, հներից՝ տողերիս հեղինակը, Շ. Ազնավորի անվան մշակութային կենտրոնի տնօրեն Արմեն Հովսեփյանը՝ այսպես ասած, իր «բալիկներով» /խոսքն «Արցախի բալիկներ» համույթի մասին է/, հուսամ՝ մասնավորապես Արցախում ընթերցողներին իրենց բազմանգամյա մասնակցությամբ արդեն ծանոթ, Ստեփանակերտի համար 6 դպրոցի տնօրեն Վիլեն Ղահրամանյանն ու զինդեկ Արմեն Մարտիրոսյանը եւ Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանի սան, երգչուիի Լուսինե Մարտիրոսյանը: Նորերի թվում էին պատերազմի ժամանակ անհայտ կորած ազատամարտիկի զավակ Կարեն Գրիգորյանը, «Նորայր-Հրայր եղբայրներ» արտադրական կոռպերատիվի ներկայացուցիչ Կարինե Սամսոնյանը, հանրապետության ժողովրդական արտիստ Քաջիկ Հարությունյանը, «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ուսանող, երգիչ Գետրդ Սիրոյանը, ՊԲ «Մարտիկ» պաշտոնաթերթի լրագրող Երազիկ Հարությունյանը:

Մեր զինվորականների համար նվերների հանգանակմանն այս անգամ մեծ շափով մասնակցել է «Նորայր-Հրայր եղբայրներ» արտադրական կոռպերատիվի տնօրեն Մանվել Դավթյանը: Նվերների իրենց բաժինն են ունեցել եւ մեր կազմակերպությունն ու հ. 6 դպրոցի տնօրինությունը: Մեկ անգամ եւս տեղին է շեշտել, որ մեր բանակն ունի անհրաժեշտ ամեն

ինչ, եւ մասնակի չափով հընթացս փոխվող մեր խմբերի արած-տարածը հարկավոր է համարել խորհրդանշական օգնություն մեր ժողովրդի անվտանգության առաջին երաշխավորին՝ հարազատ բանակին... Ինչ ու ինչքան էլ որ մենք տանելու լինենք տղաների համար, երեւույթն ամենից առաջ ունի բարոյական նպատակ եւ բարոյահոգեբանական աջակցություն է նախ եւ առաջ՝ 18-20 տարեկան մեր զինվորներին, ովքեր գտնվում են զինվորական պարտադիր ծառայության մեջ: Բանակը պետք է զգա մեզ իր թիկունքում, իսկ ինչպե՞ս կարող է դա զգալ, եթե գոնե մեկ-մեկ շտեսնի իր կողքին...

Այժմ, երբ արտահայտեցի, որքան ինձ է թվում, այս ոչ երկրորդական միտքը, անցնեմ մեր վերջին /առայժմ՝ վերջին/ հանդիպման մանրամասներին:

...Խմբին ընդունեց զորամասի հրամանատարն ինքը՝ փոխգնդապետ Կարեն Զալավյանը եւ առաջին հերթին մեզ ծանոթացրեց հրամանատարական կազմի հետ: Այնուհետև, տեղի ունեցավ հանդիպման պաշտոնական մասը: Թույլատրելիության սահմաններում մեզ պատկերացում տվեցին զորամասի առանձնահատկությունների եւ անցած ուղու մասին, մենք էլ ներկայացրինք մեր առաքելության նպատակներն ու կատարած՝ անցած աշնանից սկսած մինչեւ այս՝ ընթացիկ գարունը... Պաշտոնական մասը տեղի ունեցավ զորամասի բակում՝ սպայական ու զինվորական կոնտինգենտի ներկայությամբ: Մեր խմբի յուրաքանչյուր անդամի խոսքը, ելույթը նման հանդիպումների ընթացքում, պարզ է, առաջին հերթին պարունակում է պատգամ՝ գերազանց ծառայել հայրենիքին, ու երկրորդ հերթին՝ հորդոր, որ տղաներն անփուրեն եւ անհարկի չվտանգեն իրենց կյանքը, լինեն զգույշ եւ աշալուրջ՝ հուսալիորեն խուսափելու թշնամու նկրտումներից ու գնդակներից՝ ողջ-առողջ տուն վերադառնալու համար:

Մեզ հետ տարել էինք քաղցրավենիք, այլ մթերքներ, զինվորական ներքնազգեստի կոմպլեկտներ, հիգիենայի պարագաներ եւ այլն: Այդ ամենը բաժանվեց զինվորներին: Չանի հարմար պահն է, ասեմ, որ դեռ Ստեփանակերտում՝ նախապես, մեկ հատուկ արկդ էի պատրաստել՝ պահակային ծառայության մեջ աչքի ընկած զինվորների համար եւ հանձնեցի նրանց:

Հանդիպման երկրորդ մասը, որ իր մեջ պիտի ներառեր գրական-մշակութային բավականին հետաքրքիր ու հագեցած ծրագիր, վատ եղանակի պատճառով հնարավոր չէր անցկացնել բաց երկնքի տակ. սկսել էր առատ ձյուն տեղալ: Խնդիրը շատ արագ լուծվեց. միջոցառումն անցկացրինք հենց ընթացքից հարմարեցված զինվորական ճաշարանի սրահում:

Ուզում եմ շեշտել մի հանգամանք. այն, որ մեր նմանատիպ միջոցառումների «աղը» համարում ենք իրենց՝ զինվորական կոնտինգենտի մասնակցությունը մշակութային ծրագրին: Եվ պատկերացրեք, որ արդեն բավականին խիտ թվով անցկացված միջոցառումներից ոչ մեկի ժամանակ էլ հուսախար լինելու կամ հիասթափելու առիթ չի եղել... Ինչո՞ւ հարկ համարեցի անդրադառնալ այս խնդրին: Չո բանակի զինվորը հաճախ է լինում թշնամուն դեմ-հանդիման՝ խրամատում, բլինդաժում՝ ցերեկը, թե գիշերային խավարում՝ հսկելով պետության սահմանը, ու մշտապես ենթակա է վտանգի: Այդ նույն զինվորին երբ տեսնում ես ուրախ ու թափով շրջան մտած՝ պարելիս, զգում ես, որ սահմանն, իրոք, հուսալի ձեռքերում է, մնում է՝ բանակի թիկունքում խաղաղ կյանք վայելող ժողովրդի յուրաքանչյուր միավոր ջանա այդ բռնցքված ուժին ինչ-որ ուժ գումարել՝ ինչպես մեր Նախաձեռնող խումբը: Այդ դեպքում միայն կարող ես հանգիստ սրտով անկողին մտնել... Ամեն անգամ՝ ստորաբաժանումներում լինելիս, ես զրուցում եմ մեր զինվոր-

ների հետ, եւ դրանում բացառություն չկազմեց այս հանդիպումը: Տեսնել-լսել էր պետք շարքայիններ Ծիրակ Եսայանի, Սուրեն Սահակյանի, Արթուր Առաքելյանի, Ռոբերտ Դանիելյանի, Ռազմիկ Աղամիլյանի եւ մյուսների անկեղծ խոստովանությունները՝ հասկանալու, թե տղաների համար ինչ աստիճանի կարեւոր է թիկունքայինների արմունկն զգալն իրենց կողքին:

Վերադառնամ, սակայն, միջոցառմանը: Այս անգամ դրան հասուկ երանգ հաղորդեց հանրապետության ժողովրդական արտիստ Քաջիկ Հարությունյանի արհեստավարժ ասմունքը: Տղաների դեմքի արտահայտությունը նկարագրել հնարավոր չէ. կարծես լրացուցիչ ականջներ էին փոխ առել՝ լավ լսելու նրան: Հոյակապ էին Գետրգ Սիրողյանի եւ Լուսինե Մարտիրոսյանի երգային կատարումները: Եվ ընդհանրապես, զինանձնակազմը մեծ բավականությամբ ու ոգեւորությամբ էր ընդունում յուրաքանչյուրի ելույթ՝ լիներ երգ, պար, թե ասմունք:

Հանդիպման հանդիսավոր պահերից մեկն էլ ինչպես ես, այնպես էլ՝ երեւույթին առնչված բոլորը, համարում ենք պարզեւատրման «պարտադիր» գործընթացը...Եվ, բնականաբար, առանձին մոտոհրաձգայինների թվից եւս արժանացողներ եղան մեր կազմակերպության պատվոգրերին ու շնորհակալագրերին՝ բարեխիղճ ծառայությունում աշքի ըմկածները եւ մշակութային միջոցառմանն էլ ակտիվորեն մասնակցածները: Իսկ զորամասի հրամանատարին՝ փոխսգնդապետ Զալավյանին էլ, հանձնեցի ԱԿԱՀՄ «Հայրենիք եւ հավատ» մեդալ՝ նշելով, որ նրան, ինչպես եւ մեր բոլոր ուշադիր ու հոգատար հրամանատարներին, համարում ենք զինվորի երկրորդ հայր...

ԱՆՍՊԱՍԵԼԻ ՇՐՋԱԴԱՐՁ

Ախաճեռնող խումբն առաքելության շրջանակներում պատրաստ էր հերթական այցով լինելու ՊԲ ստորաբաժնումներից մեկում, եւ այդ նպատակի համար ԱԿԱՀՄ գրասենյակում, սովորականի պես, կենտրոնացված էին հարյուրին մոտ կապոցներ ու արկղեր՝ անհրաժեշտ իրերով ու մթերքներով լի... Ու՞մ մտքով կանցներ, որ այդ ամենը, պաշտպանության նախարարի հետ պայմանագորված, նախատեսված զորամասը տանելու փոխարեն, կտանենք... զինվորական հոսպիտալ... Պետք է այցելեինք 8-րդ առանձին մոտոհրածգային բրիգադ՝ բարմացված ծրագրով, որն իր մշակութային բաժնում ներառում էր Հայաստանից մեր կողմից հրավիրված երկու հայտնի անձանց՝ Գեւորգ Զնարերդցուն, ով ատամներով քաշում- տանում է ավտոմեքենան եւ աճպարար Սլավա Հայրապետյանին:

...Այն, ինչ տեղի ունեցավ, տեսականորեն այնքան էլ անսպասելի չէր, եւ այդուհանդերձ... Գիտեինք, անշուշտ, որ Ադրբեջանը երբեւէ նորից է պատերազմական գործողություններ սկսելու մեր դեմ, եւ առաջին հերթին՝ այն ժամանակ, երբ Արցախի անկախության ճանաշման խնդիրը դրվի իրավ' գործնական հարթության վրա... Նման հիմք կար շաբաթ առաջ, թե ոչ՝ մեզ հայտնի չէ, այդ մասին գուցե թե տեղյակ էին դիվանագիտական ու քաղաքական ոլորտի ամենաբարձր դեմքերը, հատկապես՝ նրանք, ում ձեռքերում են, այսպես ասած, աշխարհի «կառավարման լծակները», բայց փաստն այն է, որ օրերս մեր լկտի թշնամին նորից, այս անգամ արդեն՝ հրադարի հաստատումից ի վեր, աննախադեպ լայնամասշտար

/եթե համեմատելու չինենք 1992-1994թթ. պատերազմի հետ/ մարտական հարձակողական գործողություններ սկսեց Արցախի Հանրապետության դեմ՝ պետական սահմանի ողջ երկարությամբ: Կվերածվի՝ այդ հարձակումը տեսական պատերազմի, թե ոչ՝ ցույց կտա ժամանակը, իսկ առայժմ իմ երկիրն ու բանակը ծանր գոտեմարտի մեջ են, հետ են մղում հակառակորդի գրոհները, ինչպես նաև հակահարձակողական գործողություններ են ծավալում նրա դեմ:

...Երեկ՝ 2016թ. ապրիլի 4-ին, առաջին միտքը, որ ծագեց մեր գլխում, այն էր, որ մեր հանգանակած ամեն ինչը տանենք զինվորական հոսպիտալ՝ բաժանելու վիրավոր մարտիկներին: Ստեփանակերտի Կենտրոնական զինվորական հոսպիտալ՝ նրանց այցելելու էին եկել ինձանից բացի, առանձին հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ էլ, չխոսելով արդեն Պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի անդամների, ինչպես նաև՝ լրագրողների մասին: Այստեղ էլ բոլորիս սպասում էր օրինական հպարտությունը մեր բանակի զինվորների կեցվածքի համար: Նրանց՝ նոր կամ մեկ-երկու օր առաջ ծանր վիրահատություն տարածներին անհանգստացնել, անշուշտ, չեր կարելի, եւ հարգատներին ու մյուսներին անընդհատ այդ մասին էին հիշեցնում բուժաշխատողները:

Նույն օրը նույն նպատակով եղա եւ երկրորդ՝ Իվանյանում գործող հոսպիտալում, ուր կարճատել գրույցի հնարավորություն ունեցած համեմատաբար թեթեւ վիճակում գտնվող տղաներից մեկի հետ: Նա՝ գյումրեցի Հարություն Մանուկյանը, ուր ամիս է, ինչ ժամկետային ծառայության մեջ է: Իրեն դրսեւորել է որպես բարեխիղճ ու կարգապահ զինվոր:

-Պաշտպանության բանակի Հյուսիսային ուղղությունում է մեր զորամասը ծառայություն իրականացնում.-հանդարտ խո-

սել սկսեց Հարութը: -Կոճկրետ իմ ծառայությունից գոհ եմ, ի վերջո, հայրենիքի սահմանն եմ պաշտպանում...Առաջ էլ մեր դիմաց հակառակորդն իրեն հանգիստ չեր պահում, ներքափանցման փորձ էր անում, հրետակոծում... Բայց այս վերջին օրերի հարձակման բափն ուրիշ էր, հետո էլ իմացանք, որ միայն մեր ուղղությամբ չէ, որ վիճակն այդպիսին է: Ես Թալիշի պոստում եմ վիրավորվել... Դե, բժիշկներն, ինքներդ էլ տեսնում եք, ամեն ինչ անում են՝ մեր կյանքը փրկելու եւ առողջությունը պահպանելու համար: Բախտս, երեւի, բերել է, կենդանի եմ մնացել... Գիտեմ, որ բուրքն իր արժանի պատիժն ստանում է ու կստանա: Ինչ ասեմ, հայրենի հողի մի թիզն անգամ շենք տա թշնամուն...

Ես շտապեցի նրան լրեցնել եւ ասացի, որ քանի դեռ ունենք արծիվ տղաներ, քանի դեռ կա մեր փառապանձ քանակը, այդպես էլ կլինի, կպահենք հայրենիքը եւ այն կծաղկեցնենք օրօրի: Թշնամին իր նպատակին չի հասնի:

-Քեզ ու մյուս վիրավորներին էլ, Հարութ ջան, շուտափույթ առողջություն ենք մաղքում: Շուտ ոտքի վրա տեսնենք բոլորիդ, -բարեմաղթեցի ես եւ հրաժեշտ տվեցի խիզախ զինվորին:

ՄԱՐՏՆՉՈՂ ՏՂԱՎՆԵՐԻ ՄՈՏ

Այսօր՝ 2016թ. ապրիլի 6-ի առավոտյան, հմարավոր Եղավ մեկ այլ խմբի հետ լինել դեռ հերոսական մարտերը շարունակող Պաշտպանության բանակի 4-րդ պաշտպանական շրջանի դիրքերում:

Երեւանից ժամանել էր «Զինվոր» հասարակական կազմակերպությունների համակարգող խորհրդի նախագահ Մարգարիտա Խաչատրյանը, ում եւս եւ՝ համագործակցական, եւ՝ անձնական մտերիմ կապի մեջ եմ երկար տարիներ եւ շնորհակալ եմ նրանից՝ իմ կողմից դեկավարվող հասարակական կազմակերպության՝ ԱԿԱՀՄ նկատմամբ, ցուցաբերած ուշադրության համար:

Պաշտպանության նախարարության ներկայացուցիչների ուղեկցությամբ ուղեւորվեցինք դեպի դիրքեր: Տիկին Մարգարիտան հսկա մերենայով մեծածավալ օգնություն էր բերել իր հետ, ես էլ դատարկ չէի գնում տղաների մոտ, նախարարությունը մեքենա տվեց՝ այն տեղ հասցնելու համար...

Սուանձին տանկային բրիգադի հրամանատար, գնդապետ Թարուլ Հայրապետյանի հետ եղանք քողարկված պոստերում, տարած նվերները բաժանեցինք 12 դիրքի: Մարտական գործողությունների ընթացքում իրենց հերոսականությանք հատկապես աչքի ընկած գինվորներին Մ. Խաչատրյանը պարզեւատրեց «Զինվոր հայրենյաց», իսկ ես՝ մեր ՀԿ-ի «Հայրենիք եւ հավատ» մեղալով:

Աքսիոմատիկ ճշմարտություն է, որ մարդ որքան էլ անվախ ու հմուտ լինի՝ պատերազմական գործողությունների ընթացքում բնական որոշակի սրբես է տանում... Տղաների դեմքին դրա «ստվերը» կարելի էր տեսնել, սակայն բարձր էր նրանց մարտական ոգին, ինչը շատ ուրախացրեց մեզ: Տասնութից-

քսան տարեկան այդ պատաճիներն անսխալ ու դիպուկ են գործել արտակարգ լարված, անզամ կարելի է ասել՝ ճակատագրական իրադրությունում՝ թշնամուն թույլ չտալով քայլ իսկ առաջ գալ դեպի պետական սահմանի՝ իրենց վստահված հատվածը:

Մենք նրանց հրաժեշտ տվեցինք՝ վստահ, որ երկրի սահմանների պաշտպանությունը հուսալի ձեռքերում է: Վերադարձի ճանապարհին արդեն իմացանք, որ Աղբեջանի խնդրանքով եւ Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ սահմանվել է հրադադար...

Այդպես է, երբ ազրեսորը տեսնում է, որ մերոնք վճռականապես անցնում են հակահարձակման, դիմում է շահագրգիռ երրորդ կողմին եւ նրա օգնությամբ կանգնեցնում մեր հաղթական երթը: Սի՞թե ճիշտ այդպես չէր եւ 1994 թվականի մայիսին...

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԲՐԻԳԱԴ

Մոցախի Հանրապետության Պաշտպանության բանակի հրետանային բրիգադ էինք գնում ոչ սովորական տրամադրությամբ... Նախկինում տեղի ունեցած մեր հանդիպումներն այդ զորամասի զինվորականների հետ եղել էին այցեր՝ բանակի հերթական ստորաբաժնում, բայց հիմա, երբ անցել ենք Ապրիլյան պատերազմով, մեզ սպասում էր հանդիպում իրենց հերոսությունն այդ պատերազմում գործնականուն ապացուցած սպասերի ու զինվորների հետ:

Դատեցեք ինքներդ. հակառակորդը նպատակ ուներ տանկային հզոր գրոհով ճեղքել պաշտպանության մեր քնազիձը՝ հույս ունենալով թափի հաշվին ամենակարծ հատվածով արագ մտնել Ստեփանակերտ... Ու եթե չիներ հենց այս բրիգադի հրամանատարության ու փառապանծ հրետանայինների հերոսական հակառօրդողությունը, ով գիտի, թե ինչ ավարտ կունենար այդ ավանտյուրան: Փաստն այն է, որ թշնամու նախատեսած տեղի չունեցավ, ու տեղի չունեցավ ան մեր արձիվ տղաների շնորհիվ:

Յուրաքանչյուր պարզեւ ինքնին արդեն ներկայացնում է տիրոջը, ապա եւ՝ շատ բան հուշում այն իրադարձության մասին, որի շրջանակներում մարդը վաստակել է դրան արժանանալու իրավունքն ու պատիվը: Համոզված եմ, ընթերցողին ցանկացած պերճ խոսքից ավելին կասի հետեւյալ թվարկումը. ՀՀ նախագահի հրամանագրով՝ ապրիլյան մարտական գործողություններում իրենց գերազանց դրսեւորած հրետանային բրիգադից «Արիություն» մեղալով պարզեւատրվել են՝ 1-ին դիվիզիոնի հրամանատար, փոխգնդապետ Մարատ Մաթևոսյանը, 1-ին ու 2-րդ ռեակտիվ դիվիզիոնների հրամանատարներ, փոխգնդապետներ Արսեն Արյանն ու Բորիս Բարյանը,

օպերատիվ բաժնի պետ, փոխգնդապետ Նվեր Գրիգորյանը, «Մարտական ծառայություն» մեդալով՝ դիվիզիոնի շտաբի պետ, մայոր Արտյոմ Մարտիրոսյանը, մայոր Գետրգ Գասպարյանը: Բրիգադի հրամանատար, գնդապետ Գրիգորի Սահակյանն էլ արժանացել է «Մարտական խաչ 1-ին աստիճան» շքանշանի: Սպաներից բացի, եղել են եւ պարգևատրված զինվորներ, որոնց բախտ չունեցանք տեսնելու, որովհետեւ արդեն ավարտել են պարտադիր զինծառայությունն ու վերադարձել տները:

Այցը, որ տեղի ունեցավ օրերս, նախատոնական էր, այսինքն՝ հայրենյաց պաշտպաններին «հյուր էինք զնացել» հենց նրանց Ամանորն ու Սուրբ Ծննդյան տոնը շնորհավորելու: Ինքնըստինքյան հասկանալի է՝ ոչ ծեռնունայն, տասնութարկդ նվերներ էինք տարել:

Նվերը՝ նվեր, բայց առավել կարեւորը, որքան մեզ է թվում, մեր զրոյցն էր տղաների հետ: Մայրական մեր պատգամներն ու, ինչո՞ւ չէ՝ որոշակի հարցերում նաև՝ հորդորը:

«Սատարում հարազատ բանակին» Նախաձեռնող խումբը, որն այս անգամ ներկայացնում էին Անհայտ կորած ազատամարտիկների չորս մայրեր, Զոհված ազատամարտիկների միության նախագահը՝ կազմակերպության մի քանի անդամայրերի հետ, Արցախի սոցիալական ծրագրերի հիմնադրամի, «Նորայր-Հրայր» արտադրական կոռպերատիվի, «Այգեշատ» արհմիության ներկայացուցիչները, «Մենք ենք, մեր սարերը» երգի-պարի պետական համույթի մեներգիչ Վիտալի Ղազարյանը, ՊԲ ռազմահայրենասիրական բաժնի ներկայացուցիչը, եւս երկու հոգի՝ Արցախի հանրային հեռուստատեսության լուրերի բաժնից /լրագրող եւ օպերատոր/:

Սկզբում հանդիպելով բրիգադի հրամանատարական կազմի հետ՝ շնորհավորեցինք նրանց առաջիկա Ամանորը, հետո

եղանք զորանցում, զրուցեցինք զինվորների հետ, նրանց համար կազմակերպեցինք համերգ: Հաջորդ հասցեն ստորաբաժնումներն էին, վերջում էլ եղանք զորամասի բուժմասում եւ անխտիր բոլոր հիվանդներին /ուղիղ 40 հոգու/ առատ բաժին հանեցինք մեր ոգետրիչ խոսքից ու ամանորյա նվերներից:

Զորամասի հրամանատար, գնդապետ Գրիգորի Սահակյանի հետ պայմանավորվեցինք, որ արկղների հիմնական մասը հետո ստորաբաժնումներին կրածանի ԱՀՏՍ գծով տեղակալ, փոխսգնդապետ Գագիկ Արզանգույշանը:

Բրիգադի սպաների եւ զինվորների հայացքներից պարզ երեսում էր, թե որքան ուրախ էին հանդիպման համար: Իսկ թե մեզ ինչ են տալիս նման հանդիպումները, մեկ անգամ չէ, որ ասել եմ... Այժմ միայն մի միտք կարող եմ ավելացնել. Երբ մենք՝ լինելով զորամասերում, զրուցում ենք զինվորների հետ՝ դարձած մի փոքրիկ օղակ, յուրովի շարունակում ենք նրանց հոգատար ծնողների եւ ծառայությունում կոփմամբ ու դաստիարակությամբ զբաղվողների, հայրենասիրությամբ ու խիզախությամբ ոգեշնչողների գործը:

Վերջում ավելորդ չեմ համարում ներկայացնել Ապրիլյան լարված օրերի եւ ընդհանրապես, բրիգադի մասին զորամասի հրամանատարի ԱՀՏՍ գծով տեղակալ, փոխսգնդապետ Գ. Արզանգույշանի՝ անվիճելիորեն համապարփակ խոսքը:

- Ազգը միշտ էլ գոհ է լինում, երբ նրան հմտորեն հիշեցնում են նրա պատմությունը, նա ուրախանում է իր նախնիների բարեգործություններով եւ ծաղրում նրանց թերությունները, որոնք ինքը վաղուց վերացրել է:

Մարդու, իսկական մարդու համար կարեւոր է միայն մի բան՝ սիրել իր ժողովրդին, իր հայրենիքը եւ ծառայել սիրով ու հոգով:

Մեզ համար բանկ են ծնողները, բանկ են երեխաները, մեր-

ձավոր ազգականները, բայց որեւէ բանի նկատմամբ սիրո մասին բոլոր պատկերացումները միավորված են մեկ բառի մեջ՝ «Հայրենիք»:

Ազնիվ մարդը չի տատանվի անհրաժեշտ դեպքում մեռնել հայրենիքի համար... Այս սկզբունքով են դաստիարակվում եւ ծառայում բրիգադի զինվորներն ու սպաները, բրիգադ, որ կազմավորվել է 1993թ. սեպտեմբերի 1-ին եւ անցել ողջ Արցախյան պատերազմով։ Այդ շրջանում այն գործել է Սամվել Սաֆարյանի, Մերգել Բարսեղյանի, Լեւոն Մնացականյանի հրամանատարության ներքո։ Հեշտ չի եղել բանակի եւ պատերազմի ուղին։ Թշնամու մահաբեր գնդակը խոցել է բազմաթիվ հայորդիների։ Փառք ու պատիվ բոլոր նրանց, ովքեր իրենց կյանքը զոհաբերեցին հանուն հայրենիքի։ Այդ պահճակի անձինք են փոխզնդապետ Սամվել Սաֆարյանը, կապիտան Սուրեն Անտոնյանը, շարքայիններ Կամո Հայրապետյանը, Գառնիկ Պողոսյանը, Արսեն Սաֆարյանը, այլք։ Զորամասի կայացման ու զարգացման գործում ուրույն տեղ ու դեր է ունեցել փոխզնդապետ Ալեքսանդր Աբրահամյանը, ով կյանքից հեռացավ երիտասարդ հասակում։ Մենք պարտավոր ենք նրանց հիշատակը վառ պահել։

2010թ. սեպտեմբերի 4-ին զորամասի հրամանատար, գնդապետ Գրիգորի Սահակյանի անմիջական մասնակցությամբ հուշարձան-խաչքար կառուցվեց. այդ գործում մեծ աջակցություն են ցուցաբերել բրիգադի հակատանկային դիվիզիոնի սպաներն ու զինվորները։ Հիշատակը մարդկային կյանքի մեծագույն իմաստն է, նշում է հրամանատարը, իսկ կյանքը հասկանալու համար անհրաժեշտ է պահպանել դարերի հիշատակը։

Հազեցած է ընթանում հրետանային բրիգադի առօրյան։ Հրամանատար Գրիգորի Սահակյանի զինավորությամբ ճիշտ

ժամանակին առաջադրվում եւ անթերի կատարվում են մարտական խնդիրներն ու առաջադրանքները, քանզի ամեն հայ, լինի զինվոր, թե սպա, զիտակցում է, որ իր սրբազն պարտքն է լավ ծառայել հայրենիքին:

Չորամասում տիրում է խաղաղ ծառայողական մթնոլորտ, ամուր պահպանվում եւ ամրապնդվում է զինվոր-սպա փոխհարաբերությունը, ամրապնդվում է մարտական պատրաստականությունը, եւ բարձր մակարդակի վրա են բարոյահոգեբանական մթնոլորտն ու վիճակը: Չորամասը դաստիարակում է ազգին արժանի զինվորներ, ովքեր քաջ զիտակցում են, որ հաղթում է նա, ով զիտի, թե երբ կարելի է մարտավարել, որ անհրաժեշտ է խաղաղ օրերին նախատեսել ամեն բան, ինչ կարող է օգտակար լինել պատերազմի ժամանակ: Հենց այդ կապակցությամբ զորամասը հաճախակի է մասնակցում զորավարժություններին եւ ցուցաբերում բարձր արդյունքներ: Հարկ է նշել, որ զորամասի գրանցված հաջողությունների մեջ մեծ նշանակություն ունի հրամանատար, գնդապետ Գրիգորի Սահակյանի քրտնաշան աշխատանքը, ճիշտ բռնած ծառայողական դիրքն ու կողմնորոշումը: Օժտված լինելով մարդկային բարձր հատկանիշներով՝ նա կարողանում է բարձր պահել զորամասի եւ Հայոց բանակի պատիվը:

Բանակն ազգի հետ անկապտելի ամբողջություն է: Հենց այդ սկզբունքներից ելնելով՝ հրետանային բրիգադը շարունակում է ամրապնդել բանակ- դպրոց սերտ կապը՝ որպես ուսումնադաստիարակչական գործընթացի հաջողության գրավական ու կարեւորագույն խնդիր: Մեր զորամասին են կցված Ստեփանակերտի համար 11 ավագ, համար 12 միջնակարգ եւ «Ֆիզմար» դպրոցները, Մ. Մաշտոցի անվան համալսարանը: Ենթաշեֆ հաստատությունների աշակերտներն ու ուսանողները հաճախակի են այցելում մեզ թե՝ գործնական, թե՝ ճանաչո-

ղական նպատակներով /յուրաքանչյուր հայ երեխա պարտավոր է իմանալ, թե ինչ է հայրենասիրությունը, ազգասիրությունը/: Նրանք մեծ հաճույքով են այցելում զորամաս, ծանրանում զինվորների առօրյային, տոն օրերին՝ հանդես գալիս իրենց համերգային ծրագրերով: Զինանձնակազմն իր հերին լավ ընդունելություն է կազմակերպում երեխաների համար՝ ցույց տալով նրանց զորամասի խաղաղ եւ միաժամանակ, հզոր բազուկը: Նման հանդիպումները կրում են շարունակական եւ նպատակային բնույթ:

Զորամասում պատշաճ մակարդակի վրա է հոգեւոր դաստիարակությունը: Ժամանակ առ ժամանակ զորամաս են այցելում հոգեւոր սպասավորներ, քահանաներ: Այդ հանդիպումները զինվորների եւ սպաների հետ դրական ազդեցություն են ունենում: Արցախյան պատերազմում բազմաթիվ հոգեւորական ֆիդայիններ զենքը ձեռքներին մարտնչել են թշնամու դեմ, եւ այսօր նրանք իրենց հոգեւոր սպասավորությամբ նույնպես աջակցում են Հայոց բանակի առաջընթացին:

Քրիզադի հրամանատարությունը կարծում է, որ անհրաժեշտ է ներդաշնակ զարգացած անձի ձեւավորման համար օգտագործել զինվորների ձգտումը դեպի պարզեները, գովեստները զինվորների մեջ լավագույնը դառնալու ձգտումը: Այդ իսկ պատճառով զորամասում հաճախակի են կազմակերպում ինտելեկտուալ խաղեր, տարբեր բնույթի միջոցառումներ՝ նվիրված հիշարժան օրերին, զոհված ազատամարտիկներին:

Այսպես, մեր զորամասում ծառայող զինվորները պատշաճ հարաբերությունների մեջ են մեկը մյուսի հետ. նրանք ընդունակ են համատեղ ծառայել, մտածել եւ զարգացնել իրենց առօրյան:

Այս տարիների ձեռքբերումները ոչ միայն նրանում են, որ

մենք կարողացել ենք հաղթել, բարձրացնել մեր բանակի մարտունակությունը, այլ նաև՝ այն բանում, որ չափազանց կարծամկետում ստեղծվել է բանակ, որը եթե ոչ բանակական, ապա որակական առումով կարող է մրցակցել տարածաշրջանի եւ աշխարհի հզոր բանակների հետ:

2014 թվականի ապրիլի 23-ին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի հրամանագրով հայրենիքի պաշտպանության գործին բերած նպաստի, ցուցաբերած արիության, մարտական բարձր պատրաստվածության եւ զինվորական օրինակելի կարգապահության համար հրետանային բրիգադան պարզեւատրվել է «Մարտական խաչ Երկրորդ աստիճանի» շքանշանով:

2015 թ. արդյունքներով զինված ուժերում եւ պաշտպանության բանակում զորամասը ճանաչվեց լավագույն հրետանային զորամաս՝ պարզեւատրվելով համապատասխան պատվողոշով, որը հանդիսացավ ողջ անձնակազմի բարձր կարգապահության եւ բարեխիղճ ծառայության արդյունքն ու հպարտության առարկան:

Ապրիլյան չհայտարարված այս պատերազմում մենք ցույց տվեցինք հակառակորդին, որ մենք պատրաստ ենք պատերազմի եւ մեր գործողություններով սաստեցինք ու լրեցրեցինք նրան՝ ետ շպրտելով ելման դիրքեր ու պատճառելով ահոելի կորուստներ:

Մեր հրետանավորների դիպուկ համազարկերը՝ հրամանատարությամբ զորամասի հրամանատարի, շարքից հանում էին հակառակորդի զինտեխնիկան ու խուճապի էին մատնում ազերի զինվորներին, ինչպես ասվում է՝ «ցանկացած պայմաններում, ցանկացած ժամանակ՝ հրետանու դիպուկ կրակ», եւ ամեն մի արձակված արկի հետ հակառակորդին ենք հասցրել այս կարգախոսը: Սա է մեր կարգախոսը, սրանով ենք առաջնորդվել «քառօրյա» պատերազմի ժամանակ եւ սրանով ենք

առաջնորդվում էին:

Ոտքի էր ելել աշխարհի հայությունը, ովքեր բարոյական եւ նյութական աջակցություն էին ցուցաբերում իրենց եղբայրներին ու քույրերին, կազմավորում էին կամավորական խմբեր, որ Հայրենիքի առաջին խսկ կանչով շտապեն օգնության:

Մենք մի բոռնցք էինք՝ Հայաստան-Արցախ-Սփյուռք, եւ այդ բոռնցքն ուժով իշնում էր մեր ժողովրդի խաղաղ գոյակցությանը սպառնացող դաժան ոստիի գլխին:

Հայրենիքի սահմանները պաշտպանելիս ցուցաբերած բացահիկ խիզախության, անձնուրաց քաջության եւ անմնացորդ նվիրումի համար զորամասի հրամանատար, զնդապետ Գրիգորի Սահակյանին ՀՀ նախագահը 2016թ. սեպտեմբերի 21-ին պարգևատրել է «Մարտական խաչ առաջին աստիճանի» շքանշանով:

Ապրիլյան մարտական գործողությունների ժամանակ առաջադրանքների կատարմանը նպաստող հմուտ, նախաձեռնող, համարձակ գործողությունների, գորքերի մարտական պատրաստվածության ապահովման, երկրի սահմանները պաշտպանելիս ցուցաբերած ծառայությունների համար փոխգնդապետ Բ. Քարայանը, փոխգնդապետ Մ. Մաքենսյանը, փոխգնդապետ Ա. Ասրյանը, մայոր Ա. Պետրոսյանը պարգևատրվել են «Արիության համար» մեդալով, մայոր Ա. Մարգարյանը, մայոր Գ. Գասպարյանը, կապիտան Խ. Սինայյանը, ավագ լեյտենանտ Գ. Նիկողոսյանը՝ «Մարտական ծառայություն» մեդալով, իսկ թվով 67 ժամկետային զինծառայողներ՝ ՀՀ պաշտպանության նախարարի կողմից՝ գերատեսչական մեդալներով:

«Թեժ մարտերի մասնակցած մեր տղաները չեն մտածել, որ այդ պահին ինչ-որ հերոսական քայլ են կատարում, նրանք ուղղակի վճռական պահին կայացրել են ըստ իրենց ամենա-

ճիշտ ու անհրաժեշտ որոշումը՝ գիտակցելով, որ քայլն այդ կարող է նաև մահաբեր լինել»: Գնդապետ Գ. Սահակյանը հիշելով սահմանում կանգնած այսօրվա զինվորներին՝ հիշեցրեց, որ պակաս հերոսություն չէ նաև հերոսների արյամբ սրբազրծված հողը պաշտպանելը եւ վստահեցրեց, որ այսուհետ եւս, եթե անհրաժեշտ լինի, թշնամուն արժանի հակահարված են տալու: «Այնուամենայնիվ, Աստծուց խնդրում եմ, որ մեր ազգին խաղաղություն բերի: Որովհետեւ մենք մարտադաշտում հերոսացած շատ տղաներ ունենք, ովքեր սակայն կարող են հերոսանալ գիտության կամ արվեստի ոլորտներում», - անկեղծացավ գնդապետը (մեջբերում զորամասի հրամանատարի հարցազրույցներից մեկից):

Բրիգադը պատրաստ է ցանկացած պահի հրետանու դիպուկ կրակ ապահովել»:

**«ՇՈՒՏՈՎ ԿԶՈՐԱՑՐՎԵՄ, ԲԱՅՅ ԵՐԲ ԷԼ ՊԵՏՔ ԼԻՆԻ,
ՊԱՏՐԱՍ ԵՄ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ»**

Մա Պաշտպանության բանակի Չորրորդ ՊԾ Ն. գորամասում ծառայող շարքային Վլադիմիր Պողոսյանի խոսքն է, որ ընտրեցի որպես վերնագիր՝ ստորև շարադրելիքի համար: Այն լսելու բախտն ունեցավ մեր խումբը՝ «Սատարել հարազատ բանակին» առաքելության շրջանակում զինվորների հետ հերթական հանդիպման ժամանակ, որը տեղի ունեցավ վերջերս: Վլադիմիրը բարձրագույն կրթություն ունի: ԵՊՀ պատմության բաժինն է ավարտել՝ համաշխարհային պատմության գծով: Հրետանային դիվիզիոնի ավագ հետախոյզ է՝ մասնակցել է Ապրիլյան քառօրյա պատերազմին... Տղայի ինտելեկտուալ մակարդակը բնութագրող շատ մանրամասներ կարելի է ներկայացնել, սակայն ես կրավարարվեմ մեկ-երկուտով: Նախ՝ Վլադիմիրը երկու անգամ մասնակցել է «Հայ ասպետ» համարանակային մրցույթին եւ գրավել առաջին տեղը: Իսկ 2016 թվականին էլ հաղթող է ճանաչվել մեզ մոտ անցկացվող «Կյանք արժեցող խաղաղություն» թեմայով օրինակելի շարադրությունների հանրապետական մրցույթում:

Բայց, կարծում եմ, ճիշտ կլինի՝ վերադառնամ ետ եւ ամեն ինչ պատմեմ սկզբից:

Այս անգամ մեր խմբի «մշտական» անդամներից բացի, որպիսին համարում եմ ինձ ու Ը. Ազնավորի անվան մշակույթի կենտրոնի տնօրեն Արմեն Հովսեփյանին, Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի ուսանողութիւն, երգչուիկ Լուսինե Մարտիրոսյանին, երգիչ Գետրդ Միրզոյանին... մեզ միացել էին երկու երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչները. ԱԺԿ երիտասարդական թերթի ղեկավար Գոռ

Գրիգորյանը եւ «Ազատ հայրենիք»-ի երիտասարդական թեմի խորհրդի անդամ Գրիգորի Հակոբյանը: Խմբի կազմում էր նաև ԼՂՀ ԶԱՀՄ ներկայացուցիչ, երկու զոհված ազատամարտիկի / Սերգեյ ու Սամվել Թովմասյաններ/ մայր, նախկին վաստակաշատ ուսուցչուի Արփիկ Ալբոնյանը, ում խոսքը, մայրական հորդորն ու պատգամը զինվորականները լսում էին, կարելի է ասել, շունչները պահած: Տղաների տրամադրությունը եւ ընդիանուր մթնոլորտը մեզ շատ դուր եկավ: Նրանք պատրաստ են դիմակայելու ամեն դժվարության, անհրաժեշտ դեպքում անվրեա հարվածել թշնամուն: Ապրիլյան քառօրյան այստեղ շատերի համար է դիմացկունության ու անվախության քննություն եղել...Հրամկազմի հետ նախնական կարճատես զրոյցի ընթացքում նույն միտքը շեշտեց եւ հրամանատարի ԱՀՏՍ գծով տեղակալ, փոխգնդապետ Արա Քամալյանը:

Ինչպես միշտ, այդ անգամ էլ ներկայացել էինք նվերներով եւ դրանք հանձնեցինք ստորաբաժնումներին: Հետաքրքիր անցավ մշակութային միջոցառումը, որի կորիզը կազմում էր համերգը՝ երգ ու պար: Լայն պարաշրջան մտած՝ հայկական կրակոտ պարերի մեղեդու տակ «գետնից փոշի էին հանում» եւ զինվորները... Նրանցից Արթուր Խաչենցն, օրինակ, ով քանակում է արդեն տասնութ ամիս, իր փոթորկուն եւ ուրույն պարով մեզ, չիծաղեք, կարուսել հիշեցրեց...Նրան պարգետարեցի մեր միության պատվոգրով, շնորհակալագրով էլ՝ շարքային Հրահատ Ասատրյանին: Վլադիմիրին հանձնեցի «Հայրենիք եւ հավատ» մեղալ, Ժիրայր Հովհաննիսյանին ու Հայկ Նորեկյանին էլ, որպես խրախուսանք, գրքեր նվիրեցի:

Սույն հանդիպումից օրեր առաջ էլ այցելել էինք ՊԲ Հինգերորդ պաշտպանական շրջան: Այնտեղ մեզ հետ էին Արցախի պարի պետական համույթի տնօրենն Ռաուլ Բաբայանը՝ պա-

լողների խմբով, «Արցախի բայիկներ»-ը /Լուսինեի ու Գետրգի մասին նորից չեմ նշի/, ՊԲ «Գոյամարտ» հեռուստաձրագրի լրագրող Էրիկ Հակոբյանը, օպերատոր Մասիս Բեզլարյանը: Զորամասի հրամանատար Սամվել Գրիգորյանը փաստեց, որ նվերներով տղաներն, իրոք, ուրախանում են, բայց եւ շեշտեց, որ նրանց համար առավել կարեւոր երեւոյթի բարոյակա՞ն կողմն է, հասարակայնության ուշադրությունը՝ բանակի հանդեպ:

Տեղի ունեցան հայրենասիրական բնույթի զրույցներ, անցկացվեց մշակութային հետաքրքիր միջոցառում: Լսեցինք զինվորների անկեղծ «խոստովանություններն» ու ցանկությունները եւ նույնիսկ, մեկ-երկու հետաքրքիր առաջարկություն, ինչպես իրենք ասացին՝ հաջորդ հանդիպումների համար... Հասկացանք, որ նրանց, իրոք, դուր են գալիս նման հանդիպումները, ասում են՝ ձեզանից մի տեսակ տան, հարազատների կարոտն ենք առնում: Կարծում եմ, արդարացի էր հրամանատարի՝ ԱՀՏՍ գծով տեղակալ, փոխգնդապետ Ալիկ Սարգսյանին մեր կազմակերպության մեդալով պարգևատրելը /այդ պաշտոնի սպաները զինվորների, ինչպես ասում են՝ հոգու առողջության եւ ամրության գլխավոր պատասխանատուններն են/, նույն պատվին արժանացրինք եւ մյուս, մարտական պատրաստության գծով տեղակալին՝ փոխգնդապետ Գագիկ Մուրադյանին: Սերժանտ Հայկ Սիմոնյանը պատվոգիր ստացավ, ավագ սերժանտ Զավեն Ասատրյանն ու շարքայիններ Մելքը Վարդանյանը եւ Հենրիկ Սիմիքարյանը՝ շնորհակալագիր: Սեր կազմակերպության հրատարակած գրքերից մի կապ հանձնեցի զրամասի հրամանատարին:

Նման հանդիպումներից հետո մարդ իրեն ավելի է պարտավորված զգում՝ հարազատ բանակի համար անել ամեն հնարավորը եւ նույնիսկ ավելին...

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴԱՇԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

... **Ա**յն է՝ պատրաստվում էինք մեկնել զորամաս, երբ կազմակերպության մուտքի մոտ հայտնվեցին մեզ անձանոք չորս հոգի: Ասացին առաջին անգամ չէ՝ մայիսին էլ են, իրենց հրամանատար Արշակ Զաքարյանի հետ, այցելել Անհայտ կորած ազատամարտիկների հուշաբարան, քայց ցանկություն կա նորից լինել գլխավոր ցուցարանում... Նրանց խոսակցությունից կարելի էր կռահել, որ լիբանանահայեր են: «Հայոց ազգային գվարդիայի» մարտիկներ... Տեսնելով արկղների շարանը՝ հարցրին, թե ու՞՞ ենք պատրաստվում գնալ եւ իմանալով՝ ՊԲ զորամաս, ցանկություն հայտնեցին միանալ մեզ:

Մինչ մենք կրաքանչինք մեքենան, ճրանք առանց մի խոսքի արագ գնումներ կատարեցին մոտակա խանութից, հիմնականում՝ տղաների համար ծխախոտ... ու ոգեւորված թե՝ կընդունե՞ք մեզ, տիկին Վերա, ձեր խումբը, մենք պատրաստ ենք: Դե, նմաններին մերժե՞լ կլինի: Սեւակ Դեմիրճյանը, որ խմբի ղեկավարն էր, կարծ պատմեց, որ Ապրիլյան պատերազմի օրերին Արցախում էին, առաջնադիրքում... Ու հիմա էլ են շարունակում կամավորականի իրենց առաքելությունը: Ասաց՝ շուտով Արշակն էլ է գալու: Գիտե՞ք Արշակին... Ուզում էի ասել՝ իսկ կա՝ հայ, որ նրան գոնե անվամբ չճանաչի. ազգային գաղափարին ու բանակին անմնացորդ նվիրված մարդ է, հմուտ ուժիսոր, անվախ անձնավորություն. սահմանի որ հատվածում էլ թեժ իրադարձություն լինի՝ առաջինն Արշակն է հայտնվում այնտեղ եւ իր օպերատիվ ռեպորտաժներով ու տեսաֆիլմերով հիացնում, մեկ-մեկ անգամ՝ զարմացնում դիտողին:

Ես Սեւակին խորհուրդ տվեցի բոլոր դեպքերում արագ ներ-

կայանալ ՊԲ շտաբ եւ համապատասխան թույլտվություն ստանալ գեներալ-մայոր Վարդան Բալայանից, ինչն էլ արեց իսկույն, եւ շատ չանցած՝ մենք ճանապարհվեցինք: Պիտի լինեինք ՊԲ թիվ 46677 զորամասի հրետանային հառիքացային դիվիզիոնում: Այնպես ստացվեց, որ «Սատարում հարազատ բանակին» կարգախոսով աշխատող Նախաձեռնող խմբում այդ օրը՝ սեպտեմբերի 14-ին, ինձնից ու անհայտ կորած ազատամարտիկների մի քանի մայրերից, «Հանուն Արցախի» ԵՀԿ նախագահ Գոռ Բալասանյանից, Ազնավորի անվան ՍԿ տնօրեն Արմեն Հովսեփյանից /«Արցախի բալիկներ»-ի հետ/ , ՊԲ ռազմահայրենասիրական բաժնի սպա, կապիտան Նունե Աբաղյանից բացի, հայտնվեցին նաև մեր «հանպատրաստից» հյուրերը...»

Հասանք դիվիզիա: Մեզ դիմավորեցին զորամասի հրամանատարի՝ ԱՀՏՍ գծով տեղակալ, փոխգնդապետ Լեռնիկ Ասրյանը եւ սպա-հոգեբան Մարատ Հովհաննիսյանը: Հանդիպեցինք մեկ ստորաբաժանման հետ: Տարած նվերների մի մասը բաժանեցինք ստորաբաժանման տղաներին, մնացածը հանձնեցինք վերոհիշյալ սպաներին՝ ուղարկելու մյուս ստորաբաժնումներ...

Լիովին դաշտային պայմաններում կազմակերպեցինք մեծ համերգ՝ մեկուկես ժամանոց: Պարերին նասմակցում էին բոլոր... Տեսածից հուզված լիբանանահայերը եւս մտան շրջան ու սկսեցին կրակոտ պարել: Քիչ անց քրտնած դուրս գալով պարաշրջանից ու հետեւելով ստորաբաժանման զինվորներին համակած ուրախությանն ու ոգեւորությանը՝ նրանք բացականչեցին. ո՛չ-ոք ու ոչի՞նչ չի կարող կոտրել այսպիսի տղաներին, բռնանալ մեր կամքին ու ստիպել թիզ հող զիջել լավագույն հայորդիների արյան ու կյանքի գնով վերջապես ազատագրված հայկական հողերից: Թշնամին պետք է լավ իմա-

նա, որ Ռոբերտ Աբաջյան ունեցող բանակին հաղթել, հայ զինվորին ծնկի բերել չի կարող: Մահ կամ անկախ, ինքնիշխան հայրենիք:

Ես կարող եմ ասել, որ մեր բոլոր նմանօրինակ հանդիպումների «աղը» միշտ էլ կազմում են տղաների հետ մեր գրույցները: Ինչի՞ մասին ասես, որ չեն պատմում նրանք՝ բույլատրելիության շրջանակում, իհարկե: Ու մեր իսկ խոսքն են կարեւորում, որում առկա է լինում եւ՝ հարազատի սրտից բխող ջերմություն, եւ՝ բարեխսիղճ ծառայության հորդոր, եւ՝ զգուշության խորհուրդ, եւ՝ հպարտության զգացում՝ իրենց ու ողջ բանակի համար: Ռազմահայրենասիրական դաստիարակության անկեղծ ու տաք ժամ է լինում դա՝ ձեւականությունից զերծ մքնողրտում: Ի՞նչ ձեւականությունն, երբ առջեւում հակառակորդի դասավորությունն է...

Ինչպես մեզ հավաստիացրեց փոխգնդապետ Ասրյանը, զորամասի առօրյա հիմնական գործը մարտական բարձր պատրաստականության ապահովումն է, սպառազինությունն ու մարտական տեխնիկան մշտապես մարտունակ վիճակում պահելը: Դիվիզիան աշքի է ընկնում անձնակազմի բարոյակամային բարձր հատկանիշներով, կարգապահությամբ: Այստեղ բոլորը պատրաստակամ են՝ դիմագրավելու ցանկացած դժվարության, կատարելու ցանկացած առաջադրանք: Փոխգնդապետը Պաշտպանության բանակում է՝ սկսած հեռավոր 1992 թվականից, եւ դրանով ասված է ամեն ինչ: Ամունացած է, ունի երեք զավակ:

Չորամասի հրամանատարի՝ ԱՀՏՍ գծով տեղակալը Մետակ Դեմիրճյանին ու մեր խմբից երկու հոգու պարզեւատրեց զորամասի պատվոգրով՝ բանակ-հասարակություն կապի ամրապնդմանը ներդրած ջանքերի համար: Տեսնել էր պետք հատկապես Մետակի հուզմունքը, երբ ձեռքն առավ պարզեւը:

Մենք էլ ոգեւորելու «պաշար» ունեինք. մեր կազմակերպության անունից պատվողիր հանձնեցի ավագ լեյտենանտ, հոգեբան-սպա Մարտ Հովհաննիսյանին /ասել պե՞տք է, թե որդան կարեւոր է նման մասնագետի ծառայությունը ժամանակակից բանակում/ եւ ծառայությունում աչքի ընկած՝ ստորաբաժանման սերժանտ Տիգրան Գրիգորյանին: Ժամացույցներ նվիրեցինք շարքայիններ երկու Արաներին՝ Անտոնյան ու Գետրգյան: Սի խումբ զինվորներ էլ ստացան իմ հեղինակած զրքերից, ինչպես նաև՝ նորատետրեր: Կարծում եմ՝ պետք կգան...

ՎԵՐՍԻՆ՝ «ՀԻՆ ԾԱՆՈԹՆԵՐԻ» ՄՈՏ

Պիտի խոստովանեմ, որ ս. թ. Ապրիլյան ճակատամարտից հետո Պաշտպանության բանակի զորամասեր այցելելով, մենք՝ «Սատարում հարազատ բանակին» Նախաձեռնող խմբի անդամներս, մեր առջեւ ասես տեսնում ենք նոր զինվորականների, եթե անգամ նրանք նույն հրամանատարներն ու զինվորներն են, ում հետ հանդիպելու եւ զրուցելու առիթներ ենք ունեցել եւ Ապրիլից առաջ... Չեմ մանրամասնի, թե ինչումն է տարրերությունը, բայց կասեմ, որ նրանցից յուրաքանչյուրի դեմքին ավելացել է խստության նոր զիծ... եւ դա ավելի, քան բնական է:

Այս միտքն այցելեց ինձ վերջերս, երբ եղանք ՊԲ Հյուսիսային ուղղության Ն. զորամասում եւ զրուցում էինք նրա հրամկագմի, ապա եւ ծառայությունը շարունակող կրտսեր սպաների ու շարքայինների հետ: Նրանք բոլորն էլ գտնում են, որ ապրիլյան դեպքերը չպետք է կրկնվեն, եւ դրա համար արվում է ու պիտի՝ արվի ամեն ինչ...

Չորամասի հրամանատար, գնդապետ Գետրգ Մանգասարյանի աշքերի կարմրությունը չվրիպեց իմ աշքից, իմ նկատելն էլ՝ իրենից, եւ նա թերեւ կիսաժայտով բացատրեց, որ դիրքերից է եկել, եւ որ մեր այցը համընկել է զորամասի մարտական հերթապահության հետ... Ժամանակն այստեղ անցնում է լարված ոչ միայն այն պատճառով, որ շարունակվում են իրականացվել սահմանամրացման աշխատանքները, այլև, որ ամառային զինակոչի նորակոչիկներին հնարավորինս արագ ու արդյունավետ կարժեցնում են բանակային ծառայությանը:

Սույն այցին խմբի կազմում ընդգրկել էինք Ստեփանակերտի քաղաքապետարանի, ԱՀ օյուղնախարարության, «Ավտոսալոն ՍՍՍ» ՍՊԸ, ԱՀ Աֆղանական պատերազմի վետերանների միության, ԱՀ Արհմիությունների ֆեղերացիայի ներկայացուցիչներին, համար 6 դպրոցի գինդեկ Ամեն Մարտիրոսյանին, Շ. Ազնավորի անվան կենտրոնի տնօրեն Արմեն Հովսեփյանին, Զոհկած ազատամարտիկների հարազատների միության նախագահ Արթոր Առատամյանին, ԱԿԱՀՄ կողմից էլ ներկա էինք ես ու պատերազմում անհայտ կորած մոր դուստր, մասնագիտությամբ ուսուցչուիի, յոթ երեխայի մայր Նարեժա Նազարյանը։ Այցը լրաբանելու համար խմբին ուղեկցում էին «Գոյամարտ» հեռուստաձրագրի ու «Մարտիկ» թերթի լրագրողները։

Տեղի ունեցավ համերգ։ «Մենք ենք, մեր սարերը» համույթի մենակատար Վիտալի Ղազարյանի, քույրեր Լուսինե և Անահիտ Մարտիրոսյանների /առաջինը՝ երգչուիի, երկրորդը՝ պարուիի/ կատարումները մեծ տպավորություն բռնեցին ունկնդիրների վրա։ Ազգագրական ու հայրենասիրական երգերն ու Անահիտի, ինչպես տղաներն ասացին, «քնածին էլ արթնացնող» ազգային պարերը գինվորականներից շատերին հանդսատեսից վերածեցին համերգի գործուն մասնակիցների...»

Մենք, ինչպես միշտ, մեզ հետ առատ նվերներ /15 արկդ/ էինք տարել եւ դրանք հանձնեցինք գորամասի հրամանատարությանը՝ դիրքեր ուղարկելու նպատակով։ Քաղցրավենիք եր, անձնական հիգիենայի եւ առաջին անհրաժեշտության ու բժշկական պարագաներ։ Ընդ որում՝ բժշկական պարագաների մասին, իմ կարծիքով, արժե պատմել առանձին....Մեր կազմակերպության՝ ԱԿԱՀՄ մուտքից ճանապարհվելու վրա էինք, երբ հուշաթանգարանը տեսնելու նպատակով մոտեցավ մի սփյուռքահայ տղամարդ։ Ներկայացավ որպես աֆրիկահայ վիրաբույժ Գրիգոր Երզնկյան ու պատմեց, որ վիրահատու-

թյուններ է իրականացրել Արցախում:

Պահից ելնելով՝ նա հասցրեց լինել լոկ թանգարանի կենտրոնական սրահում, որովհետեւ իմանալով մեր առաքելության նպատակը՝ ցանկություն հայտնեց մասնակցել, նվերի իր բաժնը տալ... Եվ նա՝ պարոն Գրիգորը, զնաց ու դեղատնից բուժպարագաների պատկառելի ծանրոց բերեց: Մեզ հանձնելիս էլ խնդրեց իր սրտի խոսքը հասցնել մեր զինվորականներին. «Աստված անվնաս պահի բոլորիդ, հարազատներս: Արհությամբ կատարեցեք ձեր պարտականությունը՝ ազատազրված Արցախի սուրբ պաշտպանությունը: Հայոց Սփյուռքը ձեր կողքին է ու կլինի միշտ»:

Ուզում եմ հատուկ շեշտած լինել զինվորների հետ անցկացրած մեր զրոյցների կարեւորությունը: Մասնավորապես ես եւ Արցախյան պատերազմում անհայտ կորած մոր դուստր Նադեժդա Նազարյանը հանդես եկանք մայրական պատգամ ու հորդորով՝ լինել անվախ, ամուր պահել հայրենյաց սահմանը, անփութության հետեւանքով անտեղի վտանգի չենթարկել կյանքը՝ ծառայությունն ավարտելուց ողջ-առողջ հարազատների գիրկը վերադառնալու համար: Ոգեւորիչ խոսք ասացին եւ Զոհված ազատամարտիկների հարազատների միության նախագահ Արթոր Առատամյանն ու Արմեն Հովսեփյանը:

Մեր կազմակերպության պատվոգրին արժանացան Ապրիլյան ճակատամարտի մասնակից, պայմանագրային սպա, լեյտենանտ Զորիկ Խաչատրյանը եւ նորակոչիկ Սեյրան Նաջարյանը, շնորհակալագրին՝ շարքայիններ Թաթուլ Գրիգորյանն ու Մարատ Դանիելյանը, ժամացույցներ նվիրեցինք նույնական Ապրիլյան իրադարձությունների մասնակից՝ զորամասի շտաբի պետի ՊԺԿ, փոխգնդապետ Օլեգ Դավթյանին, նորակոչիկ Արմեն Պետրոսյանին: 10 զինվորականների էլ նվիրեցինք գրքեր:

Այցից ստացած բավականության մեծ զգացումով վերադարձանք Ստեփանակերտ:

**«ՀՈՂԵՐՆ ՈՒ ՎՆԿԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀԵԼՈՒ ԵՆՔ՝
ԻՆՉՊԵՍ ՊԱՀԵԼ ԵՆ ՄԻՆՉԵՎ ՄԵԶ...»**

«**Մ**ատարում հարազատ բանակին» կարգախոսով
մեր Նախաձեռնող խմբի հերթական այցը տեղի ու-
նեցավ 2016 թ. օգոստոսի 17-ին: Եղանք Պաշտպանության
բանակի 9-րդ պաշտպանական շրջանի Ն. զորամասում:

Խումբը բաղկացած էր 26 հոգուց, եւ նրա կորիզը կազմում
էին հասարակական կազմակերպությունների ղեկավար-ներ-
կայացուցիչները՝ Վերա Գրիգորյանը /ԱՀ ԱԿԱՀՍ/, Արքուր
Առատամյանը /ԱՀ ԶԱՀՍ/, Աշոտ Գրիգորյանը /ԱՀ կառավա-
րության ներկայացուցիչ, միաժամանակ՝ «Արցախ նացիոնա-
լե» ռազմահայրենասիրական հ/կ նախագահ /, Արքուր Գրի-
գորյանը /«Սիացյալ Հայաստան» հայրենասիրական հ/կ նա-
խագահ /, Կարո Պետրոսյանը /«ԱՀ սոցիալական ծրագրերի
աջակցության հիմնադրամ»-ի ներկայացուցիչ/, Արմեն Հով-
սեփյանը /Շ. Ազնավորի անվան մշակույթի կենտրոնի տնօ-
րեն/: Իրենց բաժին նվերներով խմբին միացել էին «Այգեշատ»
արհմիության նախագահ Ալվինա Ծատրյանը /ի դեպ՝ ոչ առա-
ջին անգամ/, անհատական ձեռնարկության տնօրեն Հայկա-
նուշ Մակյանը: Ընդհանուր թվով, շուրջ քսան արկդի պարու-
նակություն ենք տարել զորանաս եւ բաժանել վաշտերին:

Այցը լուսաբանելու համար խմբի հետ էին Արցախի հանրա-
յին հեռուստատեսության աշխատակիցներ, լրագրող Հարութ
Մկրտչյանը եւ օպերատոր Մերուժան Մարտիրոսյանը:

Զորամասի շտարում մեզ դիմավորեցին զորամասի հոգե-
բան-սպա, կապիտան Արմեն Կոստանյանը եւ 5-րդ գումար-
տակի հրամանատարի՝ ԱՀՏՍ գծով տեղակալ, կապիտան Ար-
քուր Արեյյանը: Բանն այն էր, որ այցը զուգաղիպել էր բանա-
կային ուսումնական զորավարժությունների հետ: Այնպես որ,

«գործ ունեցանք» մոտ 400 նորակոչիկների հետ, եւ դա էլ իր հետաքրքրությունն ուներ...

Հիմնականում տասնութը նոր լրացած այդ տղաների հետ ուղմահայրենասիրական ու պարզապես մարդկային անկեղծ գրուցներով հանդես եկան խմբի համարյա բոլոր անդամները, բայց պիտի ասեմ, որ հատկապես հուզիչ, խրատական ու ոգեւորիչ էին Արթուր Գրիգորյանի, Արմեն Հովսեփյանի, Աշոտ Գրիգորյանի, Արթուր Առատամյանի ելույթները: Մասնավորապես վերջինս, հայտնելով, որ Ապրիլյան օրերին մարտական ծառայության մեջ էր եւ իր որդին, ասաց՝ լավ է հասկանում՝ ինչ ասել է ծնողի մտահոգություն... եւ տղաներին պատգամեց զգույշ ու զգոն լինել, որպեսզի հայրենիքի հանդեպ պարտքն ըստ ամենայնի կատարելով՝ ողջ ու առողջ տուն վերադառնան:

Այցի ընթացքում մշակութային հարուստ ծրագիր մատուցեցինք մեր երիտասարդ ունկնդիրներին: Դրա հաջողությունն ապահովեցին Արցախի պարի պետական համույթը, Երգի ու պարի համույթի մենակատար Վիտալի Ղազարյանը, երիտասարդ երգչուիի, Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեզի սան Լուսինե Մարտիրոսյանը: Ասմունքին, երգ ու պարին գործուն կերպով ներգրավվեցին զինվորները, մասնավորապես՝ Սերգեյ Մկրտչյանը՝ 13-րդ վաշտից, Վաչագան Կարապետյանը՝ 14-րդից, Միսիքար Մկրտչյանը՝ 15-րդից, ...«Հայոց լեռներում»-ի ասմունքով մեզ ուղղակի հիացրեց 28 օրվա նորակոչիկ Ոստան Պետրոսյանը:

Հայտնվելով հեռուստաօպերատորի խցիկի առջեւ՝ նա պատգամ հղեց ծնողներին եւ մյուս հարազատներին, ընկեր - բարեկամներն. «Ինձ համար չմտածեք, տեսնում եք, չե՞ն, որ լավ եմ, լավ եմ, որովհետեւ մենակ չեմ, տեսեք ի՞նչ շրջապատում եմ...Սեր տրամադրությունը բարձր է, սկսում ենք սովոր

րել դժվարություններին, հարմարվել՝ զինվորական ծառայությանը, ահա այսպիսի էլ հյուրերի ընդունում...Ամեն ինչ լավ է լինելու, մեզ նման ամուր կացեք... Հողն ու անկախությունը պահելու ենք՝ ինչպես մինչեւ մեզ պահել են հերոս տղերքը»:

Հանդիպման վերջում մեզ հետ անկեղծացավ եւ գորամասի ջոկերից մեկի հրամանատար, սերժանտ Ժիրայր Բարսեղյանը, ով, ի դեպ, Ապրիլյան դաժան մարտերի մասնակիցներից է եւ ինչպես խոստովանեց՝ իհմա էլ դեռ աչք է փակում թե չէ՝ զոհված մարտական ընկերներին է տեսնում... Նա ասաց, որ նման այցերը շատ են անհրաժեշտ, որովհետեւ տան շունչն ու համն են բերում իրենց, նաեւ՝ կյանքի հանդեպ սիրո զգացողությունը սրում զինվորի հոգում, ով սահմանի վրա թշնամու դեմ կանգնած՝ մեկ անգամ եւս հիշում է, թե ինչի համար է ինքն այդտեղ. թիկունքում հայրենիքն է, որի ազատությունն ու անկախությունը պիտի պաշտպանի ամեն գնով:

-Մեր ոգին ամուր եղել է, ամուր կա եւ այդպիսին էլ կմնա՝ անկախ ամեն ինչից, դրանում վստահ եղեք, տիկին Գրիգորյան: Սիայն մի քան կիսնդրեինք. որ յուրաքանչյուր զորամասում գրնե երկու-երեք ամիսը մեկ լինեն այսպիսի հանդիպուներ,- խոսքն այսպես ավարտեց 5-րդ գումարտակի 15-րդ վաշտի 2-րդ ջոկի հրամանատար, սերժանտ Բարսեղյանը, ով, ի դեպ, զորամասի սերժանտական խորհրդի նախագահն է նաեւ: Սույն զորամասում տղան ծառայում է՝ սկսած 2015թ. հունվարից: Իր ջոկով տասն անգամ արդեն եղել է դիրքերում, մարտական հերթափոխությունում:

Ես զրուցելու պատիվ ունեցա նաեւ /այո, այո՝ հենց պատիվ ունեցա/ ավագ լեյտենանտ Թաթով Վահագնի Կրպեյանի հետ: Կրպեյանն այնքան էլ տարածված ազգանուն չէ, այո, բայց հանրաճանաչ է, եւ ընթերցողս չսխալվեց՝ եթե միտքն այս պահին իրեն հասցրեց Արցախյան ազգային-ազատագ-

լական պայքարի լեզենդար հերոս Թաթուլ Կրտեյանի մոտ. Թաթուլ Վահագնին մեր ազգային հերոսի հորեղբոր թոռն է՝ ծնված 1993թ. ՀՀ Թալինի շրջանի Թաթուլ գյուղում: Վազգեն Սարգսյանի անվան ուազմական ինստիտուտի շրջանավարտը 2014-ին ծառայության է նշանակվել այս զորամասում՝ որպես դասակի հրամանատար, մեկուկես տարի է՝ մարտական հերթափակություն է իրականացնում:

Կապիտան Արմեն Կոստանյանը /նրա անուն-ազգանունը ընթերցողն արդեն հանդիպել է հոդվածի սկզբում/ 9-րդ Պաշտպանականում է 2006 թվականից: Դասակի հրամանատար էր, հետո՝ համալրման բաժնի ավագ սպա, 2014-ի ապրիլից էլ զորամասի հոգեբան-սպան է:

-Տանը երկու եղբայր ունեմ, երկուսն էլ ծառայել են Պաշտպանության բանակում, -ասում է նա՝ ոչ առանց հպարտության:

Մայոր Արմեն Օհանյանի ծառայության ստաժը ՊԲ-ում կազմում է ուղիղ 18 տարի, որից 15-ն անցել է զորամասի ֆինբաժնի պետի պաշտոնում: Երեք զավակի հայր է՝ որդու եւ երկու դուստրերի: Ասում է՝ ներկայումս գլխավոր խնդիրը բանակն ինչպես հարկն է՝ ժամանակակից հզոր սպառազինությամբ լրազինելն է.

-Բոլորը, այդ թվում եւ՝ զինվորականությունը, -ասում ու շեշտում, - կնախընտրեին, որ այդ զենքերի գործադրման անհրաժեշտությունը չիներ, բայց... եթե, այնուամենայնիվ, դա պատահի, ապա Պաշտպանության բանակը պատրաստ է կատարել իր առջեւ դրված խնդիրը՝ հայրենիաց պաշտպանությունը նենազ քշնամուց: Հարկ եղավ՝ կկռվենք ինչպես պետքն է, ինչպես միշտ ենք կռվել...

«ՏՂԱՆ ՏՂԱ Է ԴԱՌՆՈՒՄ ԲԱՆԱԿՈՒՄ»

Պաշտպանության բանակի զորամաս գնալն ամեն անգամ նման է լինում հոգու տոնի: Մեր ուղեղը մեզ, անշուշտ, հուշում է, որ մեր բանակի զինվորից, հատկապես՝ սահմանը պահող զինվորից, թանկ բան չկա, բայց մեկ է, այդ միտքն առավելն է «միս ու արյուն» ստանում մարմնավորվում, երբ նույն զինվորի ու սպայի կողքին՝ պետական սահմանի դիրքում ես լինում...

Նայում ես տղաների դեմքներին, եւ սիրտող ասես ծփում է ուրախությունից ու հպարտությունից, ինչ խոսք՝ ներքուստ մի պահ կծկվում է, երբ մտածում ես նրանց գլխին մշտապես կախված վտանգի մասին: Ուզում ես մոտենալ, մայրական զիրկդ առնել նրանցից յուրաքանչյուրին ու համբուրել՝ ինչպես նրա հարազատ ծնողը կաներ ու շշնջալ՝ մարտական հերթապահության ժամանակ զգույշ եղիր, տղա՛ս... Բայց դրա փոխարեն զվարք հարցնում ես՝ իր, տղերք, լա՛վ եք, պատրա՞ստ եք թշնամու մռութը ջարդելու: Եվ ի պատասխան լսում՝ պատրա՞ստ ենք, մորաքո՞յր, բա էլ ինչի՞ ենք ձեռքներս զենք վերցրել... Տասնութից-քսան տարեկաններ են, բայց տղամարդկության կնիքը՝ հայացքներում, զգում ես, որ հասցրել են թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես «պնդանալ»: Եվ փառք ես տալիս Քարձրյալին, որ «փոքր ածու» լինելով էլ՝ ազգդ պատվախնիք ու խիզախ տղաների խնդիր չունի, որ քո մեկն իր արժեքով հակառակորդիդ տասք-քսանից ավելին է... Դա երկու տասնամյակ առաջ ցույց է տվել արցախյան Ազատամարտը, ցույց տվեց եւ Ապրիլյան քառօրյա պատերազմը:

«Սատարում հարազատ բանակին» նախաձեռնող խմբի, որի ղեկավարն ու անփոփոխ անդամը լինելու պատիվն ունեմ, հերթական այցը Պաշտպանության բանակի զորամաս տեղի

ունեցավ ս.թ. դեկտեմբերի 14-ին: Այդ եւ դրան շաբաթ անց հաջորդելիք մեր այցելությունը սահմանին կանգնած զինվորականներին ունի սովորականից քիչ-ինչ տարբերվող, ավելի հանդիսավոր նպատակ. նվերներով շնորհավորել նրանց Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոնի առթիվ; Ի դեպ, ինչպես արել ենք եւ անցյալ Նոր տարվա նախօրեին...

Այս անգամ խմբի կազմ էինք ներգրավել ԱՀ կառավարության աշխատակազմը ներկայացնող Աշուտ Սողոմոնյանին, ներկայացուցիչների՝ քաղաքաշինության ու սոցիալական նախարարություններից, հասարակական կազմակերպություններից, ինչպես նաև՝ ԱՀ պարի պետական եւ «Արցախի բալիկներ» համույթների մի խումբ կատարողների՝ հանդիպմանը նաև մշակութային ծրագիր ապահովելու համար:

Սկզբունք N. լեռնա-հրաձգային դիվիզիայի եւ 5-րդ ՊՇ հրամանատարների ու հրամկազմի անդամների մոտ: Նրանց հետ կարճ գրույցներից հետո գնացինք գորանոց, ծանրացանք տղաների տրամադրությանը, խոսեցինք ինքներս, լսեցինք նրանց... այս անցանք մշակութային միջոցառմանը՝ երգ-պար-ասմունքին՝ զինվորների ներգրավմամբ: Մարտական ու շարային ծառայությունում աշքի ընկած, ինչպես նաև մշակութային միջոցառումներին գործուն կերպով մասնակցող մի շարք զինվորների պարզեւատրեցինք ժամացույցներով ու զիրքերով, այդ բվում եւ՝ իմ հեղինակածից, պատվոգրեր հանձնեցինք ԼՀԴ հրամանատարի՝ ԱՀՏԱ գծով տեղակալ, գնդապետ Վրեժ Իշխանյանին, ինչպես նաև մարտական հերթապահությունից նոր վերադարձ զինվորներին:

Սեղ հետ 25 արկդ լիքը տոնական նվերներ էինք տարել, դրանց մի մասը բաժանեցինք զորանոցում, մյուսը տարանք դիրքերում գտնվողներին... Լինել անմիջապես դիրքում ծառայող զինվորի մոտ՝ դա ինչպես ինձ, կարծում եմ, նախաձեռնող խմբի յուրաքանչյուր անդամի համար էլ, յուրօրինակ

պարտքի մասնակի մարման պես մի քան է... Ամանորյա նվերները տղաներին հանձնելիս, առաջին անգամ շինելով, անձամբ ես շոշափելիորեն զգացի, թե որքան կարեւոր են մեր այցերը հայրենյաց պաշտպանների համար: Մենք դա տեսանք, կարդացինք նրանց աչքերում...

Մինչ ընթանում էր մշակութային միջոցառումը, ես հասցրի զրոյցել մի քանի զինվորի ու սպայի հետ եւ կուզենայի ընթերցողի հետ կիսվել այդ զրոյցի որոշ մանրամասներով: Կրտսեր սերժանտ Ավետիք Ավետիսյանն արդեն հետեւում է թողել պարտադիր ծառայության առաջին տարին: Ամիսը երկու անգամ մարտական հերթապահության է լինում: «Գիշերներն ինչպե՞ս են անցնում...» հարցիս Ժառանիկ պատասխանեց. «Նորմալ: Այսինքն... իրադրությունը մեկընդեզ փոխվելուն չնայած՝ կարելի է ասել, որ հիմա համեմատաբար հանգիստ գիշերներ ել են լինում: Մեկ տեսնում ես՝ ձենքները կտրեցին, մեկ ել... Բայց մենք հո քնա՞ծ չենք, աշալուր հետեւում ենք իրենց ամեն մի շարժին, ու երբ պետք է լինում՝ պատասխան հարված տալիս»:

Վաճիկ Հակոբյանն ու Սիարոն Պեպանյանն ավելի «պատկառելի ստած» ունեն. զինվորական ծառայության արդեն տասնյոթերորդ ամիսն են մանրում: Շարքային Գեւորգ Խալաֆյանին երկու ամիս է մնացել տուն վերադառնալու: Ալավերդցի է; Ասում եմ՝ կարոտո՞՞ն ես տանը, հարցիս հարցով է պատասխանում. « Յանի մարդ էլ չկարոտի՝ հարազատներին, մորքո՞ւր... Անկեղծ որ ասեմ, քանի ժամանակը կարճանում է, ենքան սիրտդ ձգում է դեպի տուն, բայց խիղճս հանգիստ է, որ պարտք եմ կատարում հայրենիքիս, ժողովրդիս հանդեպ: Դա է կարեւորը»:

Շարքային Պողոսյանն ընդամենը կես տարի է, ինչ ծառայում է ու հայրտանում է, որ... լինում է դիրքերում. «Տղեն տղա

է դառնում բանակում և ...դիրքում էլ՝ հատկապես: Ես իիմա գիտեմ դիրքում եղած ու չեղած զինվորների տարրերությունը... Այնտեղ լինելուց հետո միայն կարող ես ասել, որ հա՛, խւկական, վստահելի զինվոր ես, սահման պահող»: Դիրքի ավագ Վահե Հայրապետյանը գոհ՝ ժպտում է քթի տակ:

Կապիտան Սերգեյ Սարգսյանը վաշտի հրամանատար է: Արդեն վեց տարի ու չորս ամիս ծառայում է՝ չհաշված Վ. Սարգսյանի ամվան Ռազմական ինստիտուտում անցկացրած ժամանակը: Ըստ տարվա պայմանագիր ունեցողներից է: Առաջին իսկ տարում է ուսումնական գումարտակից տեղափոխվել, ասում է՝ դիրքային ծառայությունն ուրիշ է, երբ զինվորի կողքին ես, այստեղ, զգում ես, որ հրամանատար լինելուց բացի... չգիտեմ էլ ինչպես ասեմ, որ լավ հասկանալի լինի, մի տեսակ հոգեւոր պաշտպանի դերում էլ ես զգում քեզ, նրա կյանքի համար կրկնակի՝ պարտավորված: Ասում է՝ տնեցիների հետ կապվելու խնդիր չի լինում, անգամ սկայառով ենք միմյանց նետ զրուցում, կարոտից թերեւանում, ի՞նչ արած, եթե որպես մասնագիտություն ընտրել ես զինվորական ծառայությունը, ուրեմն՝ պիտի ծառայես, ինչպես պահանջվում է, ինքդ էլ նույնը զինվորից պիտի պահանջես, նա քեզ է նայում, քո օրինակին... Խոսում ենք առաջիկա Ամանորի մասին, ինչ-որ բան հիշելով՝ ժպտում է կապիտանը. «2011 թվականի Նոր տարին դիմավորեցի դիրքում: Շատ լավ անցավ, ուրախ էինք, ամեն բարիքից էլ մոտներս կար, տղերքը գոհ էին»:

Այդպես է: Մենք այստեղ ցերեկով հանգիստ կատարում ենք մեր գործը, զիշերն էլ անհոգ քնում փափուկ անկողիններում՝ իմանալով, որ մեր բանակն այնտեղ աշալըջորեն հսկում է երկրի սահմանները... Ուրեմն՝ եկեք անենք մեզանից կախված ամեն ինչ՝ թերեւացնելու համար նրանց դժվար առաքելությունը: Զորանասից տուն ես վերադառնում այս մտքով:

ԱՆՄՈՌԱՎԱԼԻ ԱՅՑ

«Մատարում հարազատ բանակին» նախաձեռնող խմբի մշտական անդամներիցս քացի, այդ օրը՝ 2017թ. փետրվարի 22-ին, մեզ հետ էին «Միացյալ Հայաստան» ԵՀԿ նախագահ Աշոտ Գրիգորյանը, Արցախի Հանրապետության հարկային ծառայության և «Արցախի սոցիալական խնդիրների հիմնադրամի» ներկայացուցիչները, հանրապետության ժողովրդական արտիստ Քաջիկ Հարությունյանը, «Մենք ենք, մեր սարերը» համույթի մենակատարներ Արման Չարոյանն ու Նորայր Հարությունյանը և Արցախյան պատերազմի վետերան Լեւոն Գասպարյանը՝ ժամկետային ծառայությունը ՊԲ շարքերում ավարտած իր Արման որդու հետ:

Եղանք Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի Հյուսիսային ուղղության Ն. հրետանային գնդում:

Ասել, թե հանդիպումն անցավ ջերմ եւ ուրախ մքնողորտում՝ նշանակում է շասել ոչինչ: Այցի կապակցությամբ զինվորներն ու սպաներն իրենց գոհությունը հայտնեցին, իսկ ինչ վերաբերում է, ասենք, առաջին անգամ գրամաս այցելողի հոգեկան բավարարվածությանը՝ նկարագրելու բան չէ, այն կարելի է միայն զգալ... Ընդհանրապես, բոլորիս զգացածը կարելի է տեղափորել հետեւյալ նախադասության մեջ. միայն մեր բանակայինների հետ կենդանի շփման պահերին է մարդ խորապես զգում, թե ինչպիսի միասնական ու սերտ օրգանիզմ են իրենցից ներկայացնում բանակն ու ժողովուրդը, եւ որքան կարեւոր են նման հանդիպումները...

...Խմբին դիմավորեցին գնդի հրամանատարը՝ գնդապետ Էրիկ Սկրտումյանը, հրամանատարի՝ ԱՀՏՍ գծով տեղակալ, փոխգնդապետ Հարություն Մանուչարյանը, շտաբի պետ, փոխգնդապետ Արայիկ Հարությունյանը, 10-րդ լեռնահրաձ-

գային դիվիզիայի հրամանատարի տեղակալ-հրետանու պետ, գնդապետ Նորայր Ավանյանը:

Հրամկազմի, այսուհետեւ՝ գորամասի վարժակապարակում զինվորական կոնտինգենտի հետ զրույցներից հետո, մենք ներկայացրինք մշակութային հարուստ ծրագիր:

Երգը, պարը եւ հատկապես ասմունքը՝ Քաջիկ Հարությունյանի արհեստավարժ կատարմամբ, նոր գույներ հաղորդեցին հանդիպմանը: Ոգեւորությունն այնքան էր մեծ, որ ծրագրի կեսից զինվորականները, կարելի է ասել, միջոցառման դեկն իրենց ձեռքը վերցրին... Հնչում էին հայրենասիրական երգեր, պարաշրջան էին մտել համարյա բոլորը: Գեղեցիկ ու կրակոտ պարի ընթացքում էլ ես երկվորյակ երբայրներին՝ շարքայիններ Մանվել ու Սամվել Աղաջանյաններին, նվիրեցի ձեռքի ժամացույցներ: Զինվորականներին խրախուսեցինք նաեւ գրքերով, հուշանվերներով, շնորհակալագրերով, գնդի հրամանատարին էլ պարզեւատրեցի մեր կազմակերպության՝ **ԱԿԱՀՄ «Հայրենիք եւ հավատ»** մեդալով:

Խմբից շատերը հուզված ու ջերմ ելույթ ունեցան՝ Աշոտ Գրիգորյանը, Արմեն Հովսեփյանը, ես, Ալմինան... բայց պիտի ասեմ, որ բոլորին վրա ցնցող ազդեցություն թողեց Լեւոն Գասպարյանի խոսքը: 1992-94թթ. Լեւոնը մարտնչել է հենց այդ զնդում, եղել է զնդի հրամանատար, երջանկահիշատակ Նորայր Դանիելյանի տեղակալը: Սեղ համար պարզ դարձավ Պաշտպանության բանակում ժամկետային ծառայությունն արդեն ավարտած նրա որդու՝ սույն այցին միանալու վճռի խորհուրդը... Լեւոն Գասպարյանն «Աֆղանական պատերազմի վետերաններ» արցախյան կազմակերպության վարչության անդամ է:

Քիչ առաջ հպանցիկ նշեցի, որ շնորհակալագրեր ենք հանձնել զինվորականներից ոմանց, բայց, կարծում եմ, ճիշտ

կլինի գոնե հակիրճ ներկայացնել նրանց. փոխգնդապետ Հարություն Մանուչարյան՝ գնդի հրամանատարի՝ ԱՀՏՍ գծով տեղակալ, փոխգնդապետ Արայիկ Հարությունյան՝ շտաբի պետ, գնդապետ Նորայր Ասլանյան՝ 10-րդ լեռնահրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալ-հրետանու պետ: Արայիկի մասին կուգենայի երկու տող էլ ավելացնել. նա որդին է արցախյան Ազատամարտում զոհված Հրաչիկ Հարությունյանի, ընդ որում՝ վերջինիս միանգամից չորս տղաներն են այսօր ծառայում Պաշտպանության բանակում... Համաձայնվեցեք, որ ամենուր չէ, որ կարող ես հանդիպել նման փաստի:

Իմ ուշադրությունից չվրիպեց կրտսեր սերժանտ Դավիթ Առատամյանի /ով մեկուկես տարի արդեն ժամկետային ծառայությունում է եւ մասնակցել է Ապրիլյան պատերազմին/ ձեռքի հուզիչ շարժումը, երբ իրեն գիրք նվիրեցի. տղան մատներով շոյում էր գրքի կազմը... Ինձ դա շատ դուր եկավ: Հայոց բանակի զինվորը լույսի՝ զինվոր է... Իսկ մեկ տարվա շարքային Սերոր Պատիկյանը, ով նույնական ապրիլյան օրերին հայոց պաշտպանների շարքում է եղել, իմ «Ինչպե՞ս պահեցիք դիրքը» հարցին խիստ ու հակիրճ պատասխանեց. «Արյան գնով: Ու հրաշքով էլ կենդանի ենք մնացել»: Ինձ շատ դուր եկավ նրա ձայնի խստությունը. տղան, ուրեմն, հասունացել է, թրծվել... Հասունանում են, այո, մեր բալիկները, զինվորական համազգեստն ու կանոնադրությունը նրանցից խւական տղամարդ են ձեւափորում: Հաճախակի տեղ գտնող մարտական իրադրությունը քննության է վերածվում նրանց համար, քննություն, որից տղաները դուրս են գալիս խիզախի անուն վաստակած:

Պատահական չէ, որ գնդից 150 ժամկետային ծառայողներ պարզեւատրվել են Հայաստանի եւ Արցախի նախագահների կողմից, 25 սպաներ պարզեւներ են ստացել զույգ հանրապե-

տությունների համապատասխան գերատեսչությունների կողմից: Գնդի հրամանատարն ինքը ՀՀ Անկախության տոնին նախօրյակին արժանացել է «Մարտական խաչ 2-րդ աստիճան» շքանշանի: Գունդն, ի դեպ, նշել է իր կազմավորման 21-րդ տարեդարձը, եւ այդ օրը նրանց հետ հպարտությունն ու ուրախությունը կիսել են Արցախի Հանրապետության Պաշտպանության նախարար, Պաշտպանության բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Լեւոն Մնացականյանը եւ Արցախի Հանրապետության ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը:

Տղաների համար մեզ հետ քացրավենիք էինք տարել, հյութեր, առաջին անհրաժեշտության պարագաներ՝ ուղիղ 20 արկդ: 18-ը բաժանեցինք զնի ստորաբաժանումներին, զորամասի բուժկետին, հոգեւոր օջախի /Եկեղեցու/ հերթապահ անձնակազմին /Եկեղեցում, անշուշտ, մոմեր վառեցինք՝ մեր զինվորականների կյանքի եւ ապահովության համար աղոթքով/, մնացած երկուսն էլ խմբով տարանք Ապրիլյան պատերազմի առաջին կարգի հաշմանդամ Էրիկ Բաբայանի տուն: Էրիկի երկու ազատամարտիկ մորեղբայրներն անհայտ կորել են արցախյան Ազատամարտում, տասն էլ, որ նույնպես առաջին կարգի հաշմանդամ է, տարիներ շարունակ գամփած է սայլակին... Արի ու նման այցը մի դասիր անմոռանալիների թվին...

ԿԱՐԱՎԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՐԲՆՈՑՈՒՄ

1988 -ից սկսած՝ ինչպես ամեն տարվա, այնպես էլ՝ 2017 -ի փետրվարի 27-ի առավոտը, մեզ համար սկսվեց անանց ցավի հիշողություն տված Սումգայիթյան ցեղասպանության զոհերի հիշատակի տուրքով՝ Ստեփանակերտի Հուշահամայրում, որից հետո «Սատարում հարազատ բանակին» Նախաձեռնող խումբն ուղերձեց դեպի գեներալ Իվանյանի անվան ուսումնարզական վարժարան՝ տարեկան աշխատանքային պլանի հանմածայն հանդիպելու կրթօջախի հրամկագմի ու սաների հետ:

Բացի մշտական անդամներից, խմբի կազմում էին Արցախի Հանրապետության անհայտ կորած ազատամարտիկների մի քանի մայրեր ու հարազատներ:

... Վարժարանի մուտքի մոտ մեզ դիմավորեց կրթօջախի պետ, փոխգնդապետ Վահրամ Հակոբյանը՝ ԱՀՏԱ գծով իր տեղակալ, մայոր Հրայր Բաղդասարյանի հետ: Այնուհետեւ, ծանրացանք վարժարանի ողջ հրամկազմին եւ ունկնդիրը դարձանք մեզ համար բավականին հետաքրքիր զրույցի՝ վարժարանի ընդհանուր գործունեության եւ առօրյայի շուրջ: Իրոք, հետաքրքիր էր իմանալ, օրինակ, որ այստեղ թույլ սանին պարզապես չեն պահում, ապացույցը՝ ընթացիկ ուսումնական տարում վարժարան ընդունված 70 հոգուց 16-ն այդ պատճառով «մաղվել» են... Բանն այն է, որ սաների համար այստեղ բավականին դժվար «բարձրաձող» է սահմանված, ու եթե իրոք կադրային զինվորական դառնալու ցանկություն ունես, ապա պարտավոր ես այդ «ձողով» ցատկանցում անել այնպես, որպեսզի ոտքդ չկպչի դրան... Դեռ չհաշված այն, որ ֆիզկուլտպարապմունքների ժամանակ էլ այդ բարձրաձողը

դադարում է փոխաբերական իմաստ պարունակելուց... Զինվորականը պետք է լինի ֆիզիկապես ուժեղ, ունենա կոփիված մարմին եւ ճարպկության բարձր հմտություններ:

Սաներին կոփիվելուն եւ համապատասխան գիտելիքներով գինվելուն մղող մեխանիզմներից մեկն էլ, ինչպես նշեց պետք, տարբերակված կրթաքոշակներն են: Գերազանցիկն այսուղ ամսական ստանում է 18 հազար դրամ, հարվածայինը՝ 12 հազար, միջակ սովորողը՝ 6 հազար: Բարի եղիր պայքարե՞լ առաջնության համար... Տարեկան երկու անգամ էլ տրամադրվում է նոր համազգեստ:

Վարժարանն ամեն տարի 20-30 շրջանավարտ է թողարկում, ովքեր տարբեր մասնագիտությունների գծով ուսումը շարունակում են Հայաստանի եւ Ռուսաստանի Դաշնության ուղղմական բուհերում:

Քանի այցը համընկել էր Սումգայիթյան ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա հետ՝ վարժարանի պետք, ես ու մեր խմբի մշտական անդամ Արմեն Հովսեփյանը սաների առջեւ հանդես եկանք հիշատակի խոսքով՝ այն վերածելով հայրենասիրական թեմայով անկեղծ, պատանի ունկնդիրների համար մատչելի գրույցի:

Այնուհետեւ, ինչպես միշտ՝ մեր այցերի ժամանակ, գեղարվեստական ծրագիր մատուցեցինք, որում առյուծի բաժինը կազմում էր ասմունքը: Սաներից շատերը հանդես եկան արտահայտիչ արտասանությամբ, ինչը շատ ուրախացրեց հատկապես մեր խմբի մշտական անդամ, Արցախի Հանրապետության ժողովրդական արտիստ Զաքիկ Հարությունյանին: Ծնորհաշատ դերասանն ինքն էլ հանդես եկավ հայ դասականների, ինչպես նաև՝ ժամանակակից բանաստեղծների ստեղծագործությունների ասմունքով:

Ասմոնքում առանձնապես աչքի ընկած սաներից մի քանի-սին ես պարզեւատրեցի մեր կազմակերպության շնորհակալագրով, մյուսներին՝ գրեթերով ու հուշանվերներով։ Իսկ վերջում վարժարանի ղեկավարությանը հայտնեցինք մեզ հետ տարած չորս արկղ քացրավենիքի եւ այլ համեռ մթերքների մասին։ Վարժարանի պետն իսկույն պահանջեց, որ ներկայանան կուրսերի ավագները, ովքեր ել առձեռն ստացան նվերը։ Ասեմ, որ մեզ էլ նվերի արժանացրեց ուսումնական կրթօջախի պետը. գեներալ Իվանյանի դիմանկարով կրծքանշան, որը բողարկվել է վարժարանի հիմնադրման 15 ամյակի առնչությամբ։ Երոք՝ բանկ նվեր…

Օրը մեզ պարտավորեցրել էր եւ հավելյալ այց։ Խմբով տեսության գնացինք Սումգայիթյան ցեղասպանությունից փրկված Աբալյան ընտանիքին, որը մի քանի տարի առաջ կորցրել է իր «կերակրողին»... Տենյայան՝ Ժենյա Մայիլյանը, ցեղասպան քաղաքում ԲՇԳ պետ է աշխատել, իսկ ամուսինն ու որդիները՝ տքնել գործարաններում... Ստեփանակերտ հասնելուն պես ընտանիքն արագ վերահսնեգրվել է հայրենիքին, տղաներն /երեք եղբայր/ իսկույն հարել են Արցախյան շարժմանը, ինքնապաշտպանության ջոկատներին, ապա՝ մասնակցել Ազատամարտին։ Երկուսը վիրավորվել են, կրտսերը՝ Արսենը, դաժան մարտերից մեկում անհայտ կորել։ Տիկին Ժենյան վերջին տարում շատ է փոխվել, ծերացել, մեկ-մեկ ժամանակները խառնում է իրար...Նրան, ինչպես իմ բոլոր բախտակիցներին, հաճախ է թվում, թե Արսենի ձայնը կամ ոտնաձայնն է լսում... Զանի՛ երորդ հայ մայրն է նա, որ «աչքը ջուր կտրած», անմար հույսով սպասում է որդու վերադարձին։

Մենք Աբալյանների համար էլ էինք «արկղ» պատրաստել, հրաժեշտի պահին հանձնեցինք տնեցիներին՝ երախտագի-

տության զգացում տածելով ճակատագրի հարվածների ու կյանքի դժվարության առջեւ չնահանջող ընտանիքի հանդեպ, ընտանիք, որը, մարդ չգիտի՝ ասի՝ ցավո՞ք, թե՞ բարեբախտաբար՝ միակը չէ բարոյապես ուժեղի՝ իր տեսակում:

Մենք անպարտ ենք, քանի դեռ ունենք ուժեղ ընտանիքներ, եւ կշարունակենք մնալ այդպիսին, քանի դեռ համախումք ենք ու միասնական:

**«ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԸ ՄՐԲՈՒԹՅՈՒՆ Է,
ՄԵՆՔ՝ ՊԱՏՐԱՍ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ»**

«**Մ**ատարում հարազատ բանակին» նախաձեռնող խմբի՝ 2017թ. հերթական այցը Պաշտպանության բանակի գորամասեր տեղի ունեցավ մարտի 23-ին:

Խումբը եղավ Հյուսիսային ուղղության Ն. գորամասում: Ինձնից բացի խմբի կազմում էին նաև ԶԱՀՄ նախազահ Արքուր Առատամյանը, Ազնավորի անվան մշակույթի կենտրոնի տնօրեն Արմեն Հովսեփյանը, ԱՀ ժողովրդական արտիստ Զաջիկ Հարությունյանը, Արցախյան ազատամարտի վետերան, ՆԳ թոշակառու Միքայել Հայրիյանը, Ստեփանակերտի թիվ 6 դպրոցի գինղեկ Արմեն Մարտիրոսյանը, «Սիացյալ Հայաստան» ԵՀԿ նախազահ, Շուշիի ազրարային համալսարանի դասախոս Արքուր Գրիգորյանը, «Սովետական սպաների միություն» ՀԿ նախազահ Հենրիխ Մովսիսյանը, ԱՀ ՊԲ ներկայացուցիչ, կապիտան Նունե Աբաղյանը:

Զորամասի հրամանատար, գնդապետ Կարեն Զալավյանի, շտարի պետ, փոխգնդապետ Սպարտակ Հարությունյանի, ինչպես նաև զորամաս Ժամանաճ՝ ՊԲ հրամանատարի առաջին տեղակալ Վյաչեսլավ Դամիելյանի, 10-րդ լեռնա-հրածային դիվիզիայի հրամանատար Արքուր Հարությունյանի եւ ԱՀՄ գծով նրա տեղակալ Վրեժ Իշխանյանի հետ գրույցում օրվա մեր ծրագրին ծանոթացնելուց, «կողմերի» անելիքները ճշտելուց հետո նպատակահարմար գտանք, որ խումբը բաժանվի երկու մասի. հիմք հոգու նվերներով ուղարկեցինք դիրքերը, մյուս ենթախումբն էլ ձեռնամուխ եղավ մշակության ծրագրի իրականացմանը:

Զինծառայող ունկնդիրները մեծ բավականություն ստա-

ցան Քաջիկ Հարությունյանի ասմունքից եւ «Մենք ենք, մեր սարերը» համույթի մեներգիչ Արմեն Շապոյանի վոկալ կատարումներից: Ծրագրում հնչեցին հայրենասիրական թեմայով երգեր ու բանաստեղծություններ:

Մշակութային միջոցառմանն ավելի քան ակտիվորեն էին մասնակցում զինվորները՝ արժանանալով Նախաձեռնող խմբի պարգևներին: Մասնավորապես ես ԱԿԱՀՄ պատվոգրով պարգևնատրեցի 1-ին ՀԳՄ 2-րդ ՀՎ 3-րդ ՀԴ 2-րդ ջոկի նոնականետաձիգ, շարքային Արսեն Բադալյանին եւ 1-ին ՀԳՄ 2-րդ ՀՎ 2-րդ ՀԴ 1-ին ջոկի հրամանատար, ավագ սերժանտ Արամ Գառնիկյանին: Երկուսն էլ Ապրիլյան պատերազմի մասնակիցներից են:

Համերգի ժամանակ ժամացույցներ նվիրեցի ավագ սերժանտ Գոռ Հովհաննիսյանին, ականանետային մարտկոցի հաշվարկային նշանառու, շարքային Նարեկ Պողոսյանին, հետախուզական վաշտի կրտսեր սերժանտ Ժորա Հովհաննիսյանին: Գրքեր՝ ապրիլյան մարտերի մասնակից Յուրա Նալբակյանին:

Զբաղվածությանն ու ժամանակի սղությանը շնայած՝ ինձ հաջողվեց առանձնազրույց ունենալ տղաներից ոմանց հետ: Մասնավորապես Ժորայի եւ Յուրայի հետ մեր զրույցն անընդհատ պտտվում էր անցած տարվա ապրիլի ճակատագրականորեն լարված օրերի շուրջը, եւ դա հասկանալի է. այն ժամանակ երկուսն էլ դեռ նոր էին սկսել ծառայությունը եւ, կարելի է ասել, միանգամից բախսեցին նման լուրջ փորձութան հետ: Երկուսն էլ գտնում են, որ որպես առաջին իսկական մարտական մկրտության՝ իրենք «նորմալ» են դիմագրավել այն: Հիմա ի՞նչ ասում են ժպտալով, հերթափոխությունների ժամանակ ինչպես հարկն է, այսինքն՝ պահանջված աշալքությամբ, հետեւում են սահմանի մյուս կողմում հակառակորդի անցու-

դարձին՝ ամեն վայրկյանի պատրաստ հետ մղել նրա հավանական դիվերսիոն գրոհները եւ առհասարակ ցանկացած հարձակում: Երբ նրանց ասացի՝ համերաշխ եղեք, տղերք, մեկը-մյուսին թիկունք, որքան հասկացա՝ ներողամիտ հայացքով նայեցին ինձ ու ժառացին: Յուրա Նալբակյանը նույնիսկ «բացատրեց» ժպիտը.

-Մորքուր ջան, չեք վիրավորվի, չէ՞ եքե ասեմ, որ եդ մասին խոսելն ավելորդ էլ ա...Հասկացաք, չէ՞ միտք: Ընդհանուր եմ ասում՝ քա ապրիլյան օրերը տեսնող կարո՞ղ ա ընկերոջ դադրը չիմանա... Յուրտն էլ ենք միասին տարել, մորքուր ջան, քաղցն էլ / քա՞ ոնց, պատերազմում էղպես էլ ա լինում, ամեն ինչ էլ պատահում ա/, ընկերոջ վիրավորվելն ու կրակի տակից հանելն էլ...Որ մինչեւ վերջ անկեղծ լինենք՝ կրակ վախն էլ ...հա, հա, եդ էլ ենք միասին հաղթահարել ու... թշնամու ռեխին լավ տվել: Բա որ համերաշխ չինենք, ո՞նց կարող ենք էղքանն անել: Բա մեր հայրենիքն ա, մենք էլ՝ իրա պաշտպանները: Ուրիշ կա՞: Չկա... Սադ մենք ենք ու պետք ա ախաղոր պես լինենք : Էղպես էլ կանք...

-Են ամեն ինչը աչքիս առաջն ա եղել...-մտախոհ ասում է Ժորա Հովհաննիսյանը:- Մարտական դիրքում պատրաստ էինք ամեն ինչի... քացի գերի ընկնելուց: Մահը ոչինչ էր թվում, միայն դրանից էինք կախենում:- Թե այդ պահին ինչ կար իմ աչքերում, ինչ կարդաց այնտեղ /իսկ գուցե պարզապես ինձ այդպես թվաց/, ավելացրեց,- կներես, մորքուր ջան, որ էս աստիճան քաց ու անկեղծ եմ խոսում...Պոռստո ուզում եմ, որ լիովին վատահ լինեք հայրենիքի այսօրվա պաշտպանների վրա, մենք իսկապես պատրաստ ենք ամեն փորձության, եւ արդեն ապացուցել ենք դա... Էդ էի ուզում, որ իմանաք դուք եւ բոլորը:

Ժորան էլ, Յուրան էլ մեկ տարի ու երկու ամիս է, որ ծառա-

յում են:Երկուսն էլ՝ հետախուզական վաշտում:

Մի հաճելի փաստ էլ պարզեցի ինձ համար: Այս զորամասից երկու զինվոր ընթացիկ տարում մասնակցել են ինը տարի առաջ մեր կազմակերպության / ԱԿԱՀՍ/ նախաձեռնած եւ արդեն ավանդական դարձած՝ հայրենասիրական թեմաներով օրինակելի շարադրությունների ամենամյա մրցույթին: Ժամանակ չկար ծանոթանայի նրանց հետ, բայց ինք ինձ խոստացա, որ Ստեփանակերտ վերադառնալով անպայման կպարզեմ ովքեր են:

Նույն հանդիպմանը ես մեր՝ ԱԿԱՀՍ պատվոգրով պարզեւատրեցի 1-ին ՀԳՄ 2-րդ ՀՎ 3-րդ ՀՌ 2-րդ ջոկի նոնականետաձիգ, շարքային Արսեն Բաղալյանին, ով նույնպես Ապրիլյանի մասնակիցներից է:

Ես զգացի, թե որքան անկեղծ էր խոսում ու թե խոսելիս ինչու էր հուզվում զորամասի հրամանատարի ԱՀՏՍ գծով տեղակալ, փոխզնդապետ Սպարտակ Հարությունյանը, երբ ասաց.

- Հավատացեք, տիկին Գրիգորյան, որ այս օրերին մեր տղաների պահպաժքը, եւ առաջին հերքին՝ հոգեկան արիությունը մեզ՝ հրամանատարական կազմին էլ զարմացրեց... Այնպիսի հոգեկան վերելք կար նրանց մոտ՝ աննկարազրելի բան է, ազնիվ խոսք: Հենց այդ օրերին ես, ինչպես ասում եմ՝ շոշափելիորեն զգացի, որ հանձին մեր տասնութ-քսան տարեկանների ունենք մարտական բանակ: Ունենք կենդանի ուժ, որի առջեւ խեղճանում է թշնամու անգամ զենք ու զրահը... Ափսոս միայն, որ կորուստներ եղան, շատ ափսոս: Բայց առանց դրա էլ պատերազմ համարյա չի լինում... Մեր պարտքը այժմ ու միշտ այնպես անելն է, որ թշնամուն չհաջողվի հանկարծակի բերել մեզ: Այդ դեպքում, վստահ եղեք, կորուստներ չեն լինի կամ եքել լինեն՝ ամենանվազ չափով: Սահ-

մանի պաշտպանունակությունն այսօր, ինքներդ էլ եղել շատ դիրքերում ու տեսել եք, այն աստիճանի է հասցված, որ ասածիս առաջին հերթին հավատում եմ են ... Կարող եք այդպես էլ հաղորդել բիկունքում գտնվողներին, մեր ժողովրդին: Պետական սահմանը վատահելի ձեռքերում է:

Մեզ հետ զորամաս էինք տարել 20 արկդ նվերներ, 5-ն ուղարկեցինք դիրքերը, մնացածն էլ բաժանեցինք զորամասում՝ լրաց ստորաբաժանումների:

Հրաժեշտի պահին տղաները դրախտային բուրմունք ունեցող մանուշակների փնջեր նվիրեցին Նաախաձեռնող խմբի բոլոր անդամներին: Վերադարձի ճանապարհին ես, նայելով ձեռքիս փնջին, ինձ ասացի՝ այս մանուշակների կողքով եղնիկներն են անցել...

ԱՇԽԱՏՎԻ ԱՄԵՆԱԽԱՂԱՎԱԵՐՀԱՅՈՅ ԲԱՆԱԿՆԵՐԻՆ՝ ՄԵՐ ՍԵՐՆ ՈՒ ՀՈԳԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ձինված ուժերի, կամ Հայոց բանակի, ինչպես նաև նրա փառավոր մասը կազմող Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի կազմավորումը համընկավ 1992-1994 թվականների հետ, երբ արդեն անկախ Հայաստանը եւ նոր անկախություն հոչակած ու ազգային-ազատագրական կենաց-մահու պայքարը շարունակող Արցախը հայտնվեց ժամանակակից լայնամասշտաբ պատերազմի ճիրաններում, պատերազմ, որը նրան պարտադրեց-բռնափարեց Աղրբեջանը: Դա բավականին բարդ ժամանակաշրջան էր, երբ աշխարհաքաղաքական դաշտում Խորհրդային Սիոնթյունն ապրում էր իր գոյության վերջին ամիսները, իսկ տարածաշրջանում սկսվել էր միջեթնիկական, տարածքային պատերազմ հայերի եւ աղրբեջանցիների միջեւ: Ընդ որում, հայերի կողմից միջազգայնորեն ընդունված շրջանակներում տարվող քաղաքական ու քաղաքակիրք պայքարը վայրենաբար պատերազմի վերածեց Աղրբեջանը...

...Մի պահ մտովի վերադառնանք այն օրերը, երբ հայ ժողովուրդը տեսական ընդմիջումից հետո վերականգնում էր իր անկախությունը: Առաջին կայացած պետական կառույցն այդ վճռորոշ ժամանակաշրջանում դարձավ հենց մեր բանակը: Ձինված ուժերի ստեղծումը հայերիս առաջին եւ մեծագույն ձեռքբերումն էր, բայց Արցախյան ազատամարտում մեր տղաներն իրականում դեռ բանակ չէին, նրանք իրենց համեստաբար կոչում էին «ինքնապաշտպանության ուժեր»՝ ի տարբերություն աղրբեջանցի ավազակախմբերի, որոնք «բանակ» էին հորջորջվում եւ սակայն մեր ջոկատների կամքի ու ոգու, ինչպես նաև ուսագնական ինացության ու հմտության կեսն իսկ

չունեին...

Մենք խոնարհվում ենք նրանց բոլորի՝ եւ՝ այսօր ներկաների, եւ՝ ցավոք, բացակաների առջեւ: Այդ նրանք էին, որ մեզ պարտադրված գոյապայքարը վերածեցին փառահեղ ազատամարտի՝ հաղթելով նենց ու երդվալ թշնամուն:

Այսօր մեր աչքի առջեւ նոր սերունդը շարունակում է հայ բանակի ու զինվորականության լավագույն ավանդույթները, որոնք դեռևս ձեւավորվել են Արցախյան հերոսամարտի օրերին՝ մարտի դաշտում: Դրա վառ վկայությունն էր Ապրիլյան պատերազմը: Անցած տարվա ապրիլի սկզբին մենք ականատես եղանք մեր երկրի սահմանները պաշտպանող զինվորի աննախադեպ սխրանքին, որի մասին արդեն, թերեւս, զիտի ամբողջ աշխարհը... Զինվոր, որն իր կյանքի գնով կատարեց իր առաջադրանքը՝ պաշտպանելով այն ամենն, ինչ սուրբ ու նվիրական է բոլորին համար:

Նրանք օրինակ ու չափանիշ դարձան հետագա սերունդների համար ճիշտ այնպես, ինչպես իրենց համար օրինակ ու չափանիշ են եղել իրենց հայրերը՝ Ազատամարտի, եւ պապերը՝ Երկրորդ աշխարհամարտի տարիներին: Մեր ժողովորդի բոլոր հատվածները կռվի դաշտում միասին ձեւավորեցին մեր բանակը...

Հայաստանի զինված ուժերը եւ Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակը դեռևս ձեւավորման այդ տարիներին հակառակորդին եւ բոլորին հասկացրին մի պարզ ճշմարտություն. այն, որ Արցախի ազատությունը վեր է ամեն ինչից, եւ դա զիտակցում է համայն հայ ժողովորդը, ամեն մի հայ՝ անկախ իր ապրելու վայրից... Մենք զիտակցում ենք, որ մեզանից բացի ուրիշ ոչ ոք մեզ ազատություն չի նվիրելու, ուստի միշտ պատրաստ ենք պայքարի: Եվ վստահորեն ենք նայում դեպի առաջ, որովհետեւ ունենք հուսալի պաշտպան՝ ի դեմս

հայկական բանակի:

Մեր բանակը պատմական սեղմ ժամանակահատվածում անցնելով ծանր փորձությունների միջով, պատերազմներով ու խաղաղ բանակաշինությամբ քրծվել է պողպատի պես եւ դարձել մեր ոչ միայն անկախության գլխավոր երաշխիքը, այլև՝ հպարտության ու ներշնչման աղբյուրը: Բանակաշինությունն այսօր էլ չի կորցրել իր այժմեականությունը: Խաղաղ պայմաններում հիմնական ուշադրությունը սեւեռվում է զորքերի տեսակների զարգացմանը, բանակի եւ հասարակության միջեւ կապի ամրապնդմանը եւ զինծառայողների կյանքի պայմանների բարելավմանը: Փորձագետները կարծում են, որ Հայաստանի բանակն իրավապես կարելի է համարել ամենամարտունակը տարածաշրջանում: Ավելին. այսօր մեր բանակը թեւակոխել է ավելի քան լուրջ բարեփոխումների շրջան. վերազինվում է ժամանակակից ահեղ զենք ու սպառազինությամբ, եւ դա ավելի քան հասկանալի է. 2014 թվականի մայիսին լրացել է զինադադարի ստորագրման 20 տարին, եւ այդ ամբողջ ընթացքում երկու հայ հանրապետությունների հասարակությունն ապրում է, «ոչ պատերազմ, ոչ՝ խաղաղություն» պայմաններում, իսկ դա, պետք է ասել, առանձնահատուկ բարդ վիճակ է ցանկացած բանակի ու երկրի համար...

Նման իրադրությունում մեր բանակը պատվով է կատարում իր առաքելությունը: Քսան տարին պատմության համար ակնթարթ չէ, մենք կանգնելու ենք այնքան, որքան անհրաժեշտ կլինի: Հայոց բանակը եւ՝ պատերազմի դաժան օրերին, եւ՝ զինադադարի ժամանակահատվածում, ապացուել է եւ ամեն օր ապացուցում է, որ հակառակորդի հոխորտանքները ոչինչ չարժեն, որովհետեւ սահմանին կանգնած է պատրաստված ու զիտակից հայ զինվորականը:

Մենք՝ Արցախի եւ Հայաստանի բնակիչներս, հայ հասարա-

կությունն՝ ամբողջովին վերցրած, պետք է անենք ամեն հնարավորը՝ հարազատ բանակին առաջին հերթին բարոյապես աջակցելու համար: Այսօր կարելի է արձանագրել, որ վերջին մեկ-երկու տարում հատուկ քափ է առել բանակի հանդեպ հասարակության ուշադրությունն ու հոգածությունը: Ես օրինակ եմ բերում հենց, մասնավորապես, «Սատարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խմբին, որի մեկուկես տարվա արածը պատիվ ունեմ ներկայացնելու՝ շորջ 30 այց սահմանապահ զորամասեր՝ զինվորների ու սպաների համար բազմաթիվ նվերներով ու մշակութային ծրագրով: Դիրքերն այցելելով ես զգում, այո՛, թե որքան են միմյանց անհրաժեշտ բանակն ու ժողովուրդը:

Պարտքս եմ համարում եւս մեկ անգամ վկայակոչել ու շեշտել, որ մեր քոլոր այցերի ժամանակ նվերահանգանակնան ու զորամաս մեկնելուն մասնակցել են ինչպես պետական ու հասարակական կազմակերպությունների, այնպես էլ՝ մասնավոր սեկտորի առանձին ընկերությունների ներկայացուցիչներ, բանակին սատարելու հարցում նախանձախնդիր շատ անհատներ: Նրանցից յուրաքանչյուրն իր երախտագիտության խոսքն ու սրտի պատզամն է ունենում հղելու հայց զինվորին՝ ոգեւորելու նրան...

Հորդորում եմ տարբեր ոլորտների ներկայացուցիչներին՝ հետայսու էլ անմասն շմալ հայրենանապաստ ու աստվածահաճ այդ գործից: Դա ամենաքիչն է, որ մենք կարող ենք անել մեր սահմանները պաշտպանող բանակի համար՝ ցույց տալով, որ մեր Զինվորի կողքին ենք:

Մենք անպայման շարունակելու ենք մեր առաքելությունը, եւ այդ մասին ընթերցողը հանգամանորեն կիմանա, հուսամ, «ԵՐԿՐԻ ԱՊԱՎԵՆԸ» գրքի 2-րդ մասից...


ԱՌԱՑ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ

Ըստկայական հարաբերությունների պայմաններում բոլորին է հայտնի, զրքերն ի մեծի մասի հրատարակվում են մեկենասների կամ հովանավորների ֆինանսական աջակցությամբ, եւ սույն գիրքը եւս այդ առումով բացառություն չի կազմում։ Նաեւ ընդունված է եւ ինքնըստինքյան հասկանալի՝ հովանավորին շնորհակալություն հայտնելը։ Բայց սա այն դեպքը չէ...»

Պիտի ասեմ, որ «Երկրի ապավենի» հովանավորն իմ ամուսին Շուրա Գրիգորյանն է։ Մենք ոչ բիզնես ունենք, ոչ էլ՝ այլ օժանդակ միջոց, եւ նա այդ գործը հաճան է առել ինքնակամ /ավելին՝ առարկություն չհանդուրժողի պահվածքով/, եւ ըստ այդմ՝ գիրքը լույս է տեսնում... իր կենսաբռշակի հաշվին։ Թող ընթերցողը չշտապի սխալ եզրակացություն անել։ Ես, անշուշտ, կարող էի դիմել ցանկացած գործարարի, բարեգործի, ինչո՞ւ չէ, անգամ պաշտպանության նախարարության կամ պետական այլ առյանի աջակցության ու հավատացնում եմ ձեզ, որ մերժում չէի ստանա, բայց եղակ այնպես, ինչպես եղավ...ու իմաս պահն է բացատրելու։

Մեր միակ որդին՝ Սպարտակ Գրիգորյանը, եւս մեր բանակի զինվորն է եղել, եւս կովել է հանուն Արցախի ազատության։ 1994 թվականին Հարավային ուղղությամբ ծավալված հունվարյան թեժ մարտերից մեկում նա անհայտ կորել է, եւ այդ օրվանից ասես մեկեն դատարկված մեր ընտանիքը... ապրելու ուժ է գտնում լոկ այն մտքից, որ իզուր չի եղել նրա ու հազարավորների բափած արյունը, որ այսօր ունենք ազատ ու անկախ հայրենիք՝ հզոր բանակով, որի յուրաքանչյուր զինվորի կյանքի համար դողում է երկուսի սիրտը, ու նաեւ՝ հպարտանում։ Մենք գտնում ենք, որ եւ՝ իմ կատարածն ու կատարելիքը

Նախաձեռնող խմբի հետ, եւ՝ Շուրայի, համաձայնեցեք,
առանձնահատուկ մոտեցումն ԱՅՍ գիրքը հովանավորելու
խնդրում, այն ամենաքիչն է, որ անում ենք եւ պիտի անենք հա-
նում մեր հարազատ բանակի հզորացման: Դա մեզ համար հո-
գեկան միջթարություն է եւ հոգու պարտը...



Հայրու ու որդի՝ Շուրա և Սպարտակ Գրիգորյաններ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրի խոսք.....	3
Քանակն իր թիկունքում պետք է զգա ժողովրդի շնչառությունը.....	4
Մայիսյան տոնական այցելու գորամասեր՝ Պաշտպանության նախարարին կից հասարակական խորհրդի անդամներով.....	6
Ժողովուրդ եւ բանակ՝ մեկ մարմին, մեկ հոգի.....	11
Երդմանը հավատարիմ.....	16
Նման հանդիպումները լիցք են հաղորդում բոլորին.....	20
Քարոյական սատարումը բանակին՝ պարտք է ու չհնացող խնդիր.....	23
Հայ զինվորը լավ զիտի ինչ է պաշտպանում եւ ում.....	26
«Պետք լինի՝ կծառայեմ ավելին էլ».....	31
Հավատով ու ոգով լինել զինվորի կողքին.....	35
Առանձին մոտոհրածիկայինների մոտ՝ ավանդականի վերաճած առարելությամբ.....	39
Անսպասելի շրջադարձ.....	43
Մարտնչող տղաների մոտ.....	46
Այցելություն հերոսական բրիգադ.....	48
«Շուտով կզորացրվեմ, բայց երբ էլ պետք լինի, պատրաստ եմ վերադառնալու».....	57
Հանդիպում դաշտային պայմաններում.....	60
Վերստին՝ «Հին ծանոքների մոտ».....	64
«Հողերն ու անկախությունը պահելու ենք՝ ինչպես պահել են մինչեւ մեզ...».....	67
«Տղան տղա է դատնում բանակում».....	71
Անմոռանալի այց.....	75
Կադրային զինվորականների պատրաստման առաջին դարբնոցում..	79
«Պետական սահմանը սրբություն է, մենք՝ պատրաստ նրա պահպանությանն ու պաշտպանությանը».....	83
Աշխարհի ամենախաղաղասեր՝ Հայոց բանակներին՝ մեր սերն ու հոգածությունը.....	88
Առանց շնորհակալության.....	92

ՎԵՐԱ ԱՐՄՈՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵՐԿՐԻ ԱՊԱՎԵՆԸ

Անմոռաց հանդիպումներ

Ստեփանակերտ - 2017

Խմբագիր՝
Մրբագրիչ՝
Համակարգչային շարվածքը՝
Էջաղբումը՝
Կազմի ձեւավորումը՝

Սոֆյա Սարգսյան
Իրենա Մարտիրոսյան
Լուսինե Մարտիրոսյանի
Մարինա Ավանեսյանի
Մարինե Սայհյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84¹/₁₆,
ծավալը՝ 6 տպ. մամուլ + 88 էջ ներդիր, տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Հ.Հակոբյան, 25, Ստեփանակերտ-2017